Azg
armenian daily

3 ՅՈՒՆԻՍ 2003 ԵՐԵՔՇԱԲԹԻ 103 (2788)

Գրադարան
Հայոց Ազգային Վանք

Մեծ Բրիտանիայում մեղադրում են Թոնի Բլերին

ԼՈՆԴՈՆ, 2 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեծ Բրիտանիայում աղմկալից խայտառակություն է հասունանում Իրաքում պատերազմն սկսելն արդարացնելու համար Սադդամ Հուսեյնի վարչակարգի ունեցած զանգվածային բնաջնջման զենքի վտանգավորությունը չափազանցնելու մեջ երկրի վարչապետ Թոնի Բլերին մեղադրանքներ ներկայացնելու առնչությամբ: Այսօր ստացված հաղորդումների համաձայն, լեյբորիստական կառավարության Նախարարների կաբինետի երկու նախկին անդամներ հանդես են եկել համանման հայտարարություններով:

Այսպես, Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման հարցերով նախկին նախարար Քլեր Շորթը լրագրողների հետ հարցազրույցի ժամանակ Թոնի Բլերին մեղադրել է Սադդամ Հուսեյնի վարչակարգի դեմ պատերազմ սկսելու համար որպես ծեւական առիթ Իրաքի ունեցած զանգվածային բնաջնջման զենքի առնչությամբ բրիտանացիներին «խաբելու» մեջ:

Թոնի Բլերի իրաքյան քաղաքականության քննադատությամբ հանդես է եկել նաեւ Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախկին նախարար Ռոբին Քուկը: Նա կոչ է արել հետաքննել այն փաստերը, որոնց հիման վրա Թոնի Բլերը հայտարարել էր Սադդամ Հուսեյնի «ռազմական ակտիվ ոլանների» մասին, որն անհրաժեշտության դեպքում իբր կարող էր զանգվածային բնաջնջման զենք գործադրել 45 րոպեի ընթացքում:

ԱՍՓՈՓՈՒՄ

Օրենսդիր մարմինը գրեթե լրիվ կազմվեց

Դեռեւս հայտնի չէ ում համար՝ ժողովրդի՞, թե՞ իշխանության

Խորհրդարանական ընտրությունները ավարտվեցին: Արդեն ուրվագծվում է երրորդ գումարման Ազգային ժողովի եւ գործադիր իշխանության կազմը: Մի կողմ թողնելով այն հարցը՝ արդյոք ժողովրդի՞, թե՞ իշխանությունների ընտրյալներն են հայտնվել պառլամենտում, արձանագրենք փաստեր եւ անուններ: 21 քաղաքական ուժերից խորհրդարանական դարձան 6-ը՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը, «Արդարություն» դաշինքը, «Օրինաց երկիրը», ՀՅԴ-ն, «Ազգային միաբանությունը» եւ մեկ-երկու ամիս առաջ ստեղծված, բայց ժողովրդի մե՞ծ համակրանքը վայելող «Միավորված աշխատանքային կուսակցությունը»: ՀԺԱՄ-ը, չնայած տարածված լուրերին, թե ընտրությունների արդյունքների ամփոփման օրը կուսակցության գրասենյակում արդեն հաղթանակ էին տոնում, 5 տոկոսանոց արգելքն այդպես էլ չհաղթահարեց:

Համամասնական ընտրակարգով ամենաշատ պատգամավորներն ունեն հանրապետականները՝ 23 (Անդրանիկ Մարգարյան, Սերժ Սարգսյան, Տիգրան Թորոսյան, Հովիկ Աբրահամյան, Գալուստ Սահակյան, Գագիկ Մինասյան, Վազգեն Խաչիկյան, Սամվել Նիկոյան, Գագիկ Մելիքյան, Հերմինե Նաղդաշյան, Վարդան Խաչատրյան, Անդրանիկ Մանուկյան, Ռազմիկ Մարտիրոսյան, Մանուկ Թոփուզյան, Կարեն Ճշմարիտյան, Վարդան Այվազյան, Արմեն Մովսիսյան, Արարատ Մկրտչյան, Դավիթ Զադոյան, Մախսիմ Հակոբյան, Համլետ Հարությունյան, Ատոմ Արսենյան, Տիգրան Արզախանցյան): Հաշվի առնելով, որ համամասնական այս ցուցակի շուրջ մասն արդեն ներկայացված է գործադիր իշխանությունում եւ Սերժ Սարգսյանը կամ Հովիկ Աբրահամյանը շարքային պատգամավոր մնալու մտադրություն հստակ չունեն, պառլամենտականներ կդառնան նաեւ Ալեքսանդր Սարգսյանը, Լեոնիկ Ալեքսանյանը, Աբրահամ Մանուկյանը եւ այլք, ըստ համամասնական ցուցակի:

Տես էջ 2

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Ռ. Քոչարյան. «Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում լինել չի կարող»

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ՅՈՒՆԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Երկու տարի առաջ, երբ բանակցությունների սեղանին էին դրվել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման փոխզիջումային սկզբունքները, որոնք իրենց զարգացումը գտան Քի Վեսթում, մենք բավականին մոտ էինք հարցի լուծմանը», նշեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ Սանկտ Պետերբուրգում հայ համայնքի հետ ունեցած հանդիպման ընթացքում: Ժամանակին Ադրբեջանը հրաժարվեց այդ սկզբունքներից, իսկ այժմ, նախագահի խոսքերով, աշխատանքներ են տարվում փարիզյան համաձայնություններին մոտ դրույթներ ստեղծելու ուղղությամբ:

Ըստ Ռոբերտ Քոչարյանի, բանակցությունների ներկա «սառեցումը» պայմանավորված է ՀՀ-ում կայացած եւ Ադրբեջանում աշնանը կայանալիք նախագահական ընտրություններով: Ակնկալվում է, որ դրանք կվերսկսվեն այս տարվա վերջին կամ գալիք տարվա սկզբին: «Ամեն դեպքում, մենք միանշանակ ասում ենք, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում լինել չի կարող», հայտարարեց Ռոբերտ Քոչարյանը, հավելելով, որ հակառակ դեպքում այդ տարածքն ամբողջությամբ կհայաթափվի:

Գյուղնախարարը հացամթերքի թանկացումը պայմանավորում է Ռուսաստանում հացահատիկի գնաճով

ԵՐԵՎԱՆ, 2 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Հայաստանում հացահատիկի, ալյուրի, հետեւաբար նաեւ հացի եւ հացամթերքների գների բարձրացումը պայմանավորված է Ռուսաստանի Դաշնությունում այդ ապրանքատեսակի գների աճով»: ՀՀ Գյուղատնտեսության նախարար Դավիթ Զադոյանը այսպես մեկնաբանեց վերջին մեկ շաբաթվա ընթացքում ներքին շուկայում հացի եւ ալյուրի մոտ 13% գնաճը: Ըստ նախարարի, ՈԴ-ում պարենային հացահատիկի զգալի ծավալներ հատկացվել են գարնանացանի համար՝ կրկնապատկելով ցանքատարածությունները, ինչն էլ առաջ է բերել հացահատիկի դեֆիցիտ եւ գնաճ:

Դ. Զադոյանը նշեց, որ Հայաստանում արտադրվող հացահատիկի ծավալները ընդամենը 5-6 ամիս կարող են բավարարել ներքին պահանջարկը, իսկ մնացած քանակությունը ներկրվում է, ուստի միջազգային շուկայում գների փոփոխությունը անմիջապես ազդում է ներքին շուկայի գների վրա: Միաժամանակ Դ.Զադոյանը վստահեցրեց, որ առաջիկա ամիսներին՝ հացահատիկի բերքահավաքից հետո, ներքին շուկայում հացամթերքի գները կկայունանան:

«Ազգ»-ի կողմից հիշեցնենք, որ մեր թերթը նախապես նշել էր թանկացման այդ պատճառը: Սակայն կրկնենք նաեւ մեր հարցադրումը՝ թանկացումը ինչո՞ւ տեղի ունեցավ ընտրություններից անմիջապես հետո:

Ռուսաստանն այլեւս Վաշինգտոնի «սեւ ցուցակում» չէ

ԼՎԻՆ, 2 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն այլեւս ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի «սեւ ցուցակում» չէ, մինչդեռ Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը եւ Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերն ամենայն հավանականությամբ, դեռ երկար կմնան այնտեղ:

Սանկտ-Պետերբուրգի 300-ամյակի տոնակատարության ժամանակ Բուշը Պուտինին դիմել է որպես «իմ լավ ընկեր» եւ հրավիրել նրան սեպտեմբերին այցելել «Քեմփ Դեվիդ» նախագահական ամառանոց: «Իրաքի վերաբերյալ մեր տարաձայնությունները կամրապնդեն մեր հարաբերությունները», ասել է ԱՄՆ նախագահը: Միացյալ մամլո ասուլիսին Պուտինն իր հերթին նշել է. «Պարզվեց, որ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ վաղեմի բարեկամական հարաբերություններն ավելի ամուր են, քան ուժերը եւ իրադարձությունները, որոնք փորձում էին դրանք»:

Ռուսաստանի վերաբերյալ Վաշինգտոնը եկել է եզրակացության, որ Պուտինի հակապատերազմյան դիրքորոշումն ուներ լուրջ ներքին քաղաքական հիմքեր: Բացի այդ, Ռուսաստանը կարեւոր գործընկեր է ահաբեկչության եւ Իրանի ու Հյուսիսային Կորեայի միջուկային ընդվզումների դեմ պայքարում:

Ինչ վերաբերում է Գերմանիային, չնայած Բուշը եւ Շրյոդերը հանդիպախոսություններ էին փոխանակում Սանկտ-Պետերբուրգում, սակայն եւ՝ Սանկտ-Պետերբուրգում, եւ՝ Ֆրանսիայի էվիան քաղաքում նույն օրը կայացած աշխարհի առաջնորդների գագաթաժողովին Բուշն ընդհանուր առմամբ չէր նկատում Շրյոդերին:

Ֆրանսիան, որը խիստ ինքնադատությամբ էր հանդես եկել ԱՄՆ-ին իրաքյան պատերազմում սատարող Արեւելյան Եվրոպայի երկրների նկատմամբ, Վաշինգտոնի մոտ ավելի լուրջ վնասվածքներ է առաջացնում: Վաշինգտոնը Ֆրանսիային կդասի գլխավորապես ռազմական ոլորտում համագործակցության կրճատմամբ:

Իրաքում գործում է «Սադդամի հեծյալներ» խմբավորումը

ԿԱՀԻՐԵ, 2 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրաքում իր մասին հայտարարել է նախկինում անհայտ «Սադդամի հեծյալներ» ահաբեկչական խմբավորումը: Ինչպես այսօր հաղորդել է «Աշ Շարկ ալ Աուսաթ» համաարաբական լրագիրը, այդ խմբավորման գրոհայինները սպանել են Հիլա քաղաքում լույս տեսնող «Ալ Ֆայհա» լրագրի գլխավոր խմբագիր Մուհամեդ ալ Զահաբիին: Միջադեպի ամսաթիվը չի ճշգրտված: Ալ Զահաբին գնդակահարվել էր իր առանձնասենյակում դիմակավորված մարդկանց կողմից: Նրա դիակի մոտ մարդասպանները երկսող էին թողել, որից հետեւում է, որ «Սադդամի հեծյալները» «հաշվեհարդար կտեսնեն ամեն մեկի նկատմամբ, ով կհամագործակցի զավթիչների հետ»:

Հնդկաստանում շոգը կյանքեր է խլում

ՆՅՈՒ ԴԵԼԻ, 2 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հնդկաստանի Անդհրա Փրադեշի նահանգում ջերմահարության հետեւանքով զոհվել է գրեթե 900 մարդ: Այս հարավ - արեւելյան տարածաշրջանում ջերմաչափի սյունը երրորդ շաբաթն անընդմեջ չի իջնում ըստ Ցելսիուսի 47 աստիճանից: Պաշտոնական աղբյուրների համաձայն, միայն անցյալ օրը տարն այնտեղ շուրջ 100 մարդու կյանք է խլել: Հարեւան Օրիսայի նահանգում մահացու վախճանով ջերմահարության զոհ է դարձել մոտավորապես 120 մարդ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Ոսկե մեդալի 204 հավակնորդներից հայոց լեզվի քննությունից առավելագույն միավորներ են վաստակել 130-ը

ԵՐԵՎԱՆ, 2 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի դպրոցների 49 հազար շրջանավարտներ հունիսի 1-ին սկսեցին 2002-2003 ուստարվա դպրոցական ավարտական քննությունները: Նույն օրը Երեւանի Զոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցում կենտրոնացված կարգով հայոց լեզվի քննություն հանձնեցին նաեւ երկրի դպրոցների ոսկե մեդալի 267 հավակնորդներից 204-ը:

Ինչպես նշեց ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը, սկզբում ոսկե մեդալի համար դիմում էին ներկայացրել 447 շրջանավարտներ, ստուգումներից հետո մնացել էին 329-ը: Վերջնական փուլում քննության մեջ է մասնակցեին 267 հավակնորդներ, սակայն ներկայացել էին 204-ը:

Բուհերի եւ դպրոցների հայոց լեզվի մասնագետների 15-հոգանոց հանձնաժողովը հունիսի 2-ին հրապարակեց գրավոր աշխատանքների արդյունքները. հայոց լեզվի կենտրոնացված քննությունից առավելագույն՝ 19 եւ 20 միավորներ են վաստակել 130 հավակնորդներ: Հունիսի 3-ին նրանք կմասնակցեն մաթեմատիկայի կենտրոնացված քննությանը:



ԸՆԹԱՑԻԿ

Ճանապարհ դեպի ԱԺ

Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից 33 օր առաջ ծավալվել էր քաղաքական գովազդարշավ: Թե ինչ նպատակ ունի գովազդը, այն էլ՝ քաղաքական, հայտնի է բոլորին: Եվ թե որքանո՞վ իր նպատակին հասավ այս քաղաքական քարոզարշավը եւ որքանո՞վ էր ազդեցիկ կփորձենք պարզել ստորեւ: Քաղաքական գովազդային հոլովակների առիթով իրենց քննարկումներն ու ուսումնասիրություններն են արել Հայաստանի պետական մանկավարժական համալսարան կուլտուրայի ֆակուլտետի հեռուստալրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողները, որոնց նկատառումները կներկայացնենք համառոտ:



ակնհայտ էր, որ խորհրդարան են մտնում մականունավոր պատգամավորներ եւ ժամերի պատմություն ունեցող ՄԱԿ-անունավոր կուսակցություններ:

«Փոխենք մեր կյանքը», շատ տպավորիչ կարգախոս է, որից հետո, չգիտես ինչո՞ւ, երեւի տրամաբանորեն, սպասում ես դրան հասնելու ուղիների մատնանշման, որի մասին այդպես էլ չի խոսվում: Սակայն դա այնքան էլ կարեւոր չէ, որովհետեւ սյուժեի զարգացմանը զուգահեռ լսվում են հետեւյալ խոսքերը. «Հանուն 17-ամյա սերնդի քվեարկենք 17 թվին», որը չգիտես, թե որքանով կաղ ունի երկիր կառուցելու եւ կայուն քաղաքականության հետ: Եվ ընդհանրապես շա՞տ բան է արդյոք արվել այդ 17-ամյա սերնդի համար մինչ այդ:

Բերենք մեկ այլ օրինակ: Չգիտենք, ո՞վ ի՞նչ էր սպասում ՀԺԱՄ կուսակցության գովազդից, սակայն այն հիմնականում կառուցված էր այդ օրվա նախընտրական հանդիպումների վրա, որի ժամանակ մարդիկ անընդմեջ նշում էին, որ ՀԺԱՄ-ի գաղափարներն ու ծրագրերն ընդունելի են իրենց համար: Մի այլ դեպքում կրկին զուգորդվել էին թվերը 10-րդ համարը հարցաթերթիկում եւ 10-րդ համարի տակ հանձարեղ մարդիկ: Տրամաբանեք իմներդ: (Մանուկյան Էլեն)

«Ազգային միաբանություն» կուսակցության քաղաքական գովազդն իր տեսակի մեջ թերեւս ամենաուշագրավն էր: Տեսահոլովակն իր ողջ էությամբ աստվածաշնչյան մեջբերումների եւ վերամբարձ խորհրդանշանների մի ամբողջություն էր՝ ստեղծված տիպիկ գեղամյանական ռեժիսուրայով: Ինչո՞ւ հանկարծ մենք այդքան սրբացանք եւ այդպե՞ս է արդյոք իրականում: Միավոր է երկրի վիճակը, բայց կա մեկը, որը կփրկի ազգը, իսկ թե ումի՞ց, ինչի՞ց եւ, ամենակարեւորը, ինչպե՞ս, այս անգամ եւս մնաց անհայտ: Եթե հաշվի առնենք, որ նմանատիպ հոլովակները ստեղծվում են ընտրությունների ընթացքում առպահովելու խիստ անհրաժեշտ վստահությունը, ապա հարց է առաջանում. «Սոկա՞ են արդյոք ճշմարտության եւ ազդեցիկության հանգամանքները ԱՄ քաղաքական գովազդում»: (Դավթյան Աննա)

Աժ թեկնածու Ռուբեն Գեւորգյանի քաղաքական գովազդի ժամանակ ներկայացվեց նշված թեկնածուի կառուցած եկեղեցին, որը երեւի թե վկայում էր արդեն իսկ կատարված սուրբ գործերի մասին: Վերջինս ծածուկ մտնում է եկեղեցի եւ հորդորում ժողովրդին, որը եթե այս ընտրությունների ժամանակ ինքը չընտրվի, ապա զարհուրելի կսիրի Աժ-ում: Չի կարելի մեղադրել Ռ. Գեւորգյանին. չէ՞ որ մի «ծաղիկը» հերիք չէ զարհուրելի դրությունն իսպառ վերացնելու համար: (Մուրադյան Նարիր)

«Կանանց եւ արդյունաբերողների» կուսակցության կարգախոսն անմիջապես տպավորվում է. «Մենք կբացենք աշխատատեղեր եւ տուն կվերադարձնենք մեր հայրերին»: Իհարկե, լավ է, որ աշխատատեղեր բացելու մասին մտածում են նաեւ կանայք, սակայն մեկ հարց հստակ առաջանում է. «Իսկ ո՞ւր էին մինչ այդ մեր հայրերը»: (Գեւորգյան Գոհար)

ՀՈԱԿ քաղաքական գովազդը միգուցե թե շատ ներկայանալի էր: Ընդգրկուն սյուժե՝ անդրադարձ կուսակցության անցյալին, ներկային եւ ապագա գործունեությանը: Անցյալում շատ բան է եղել, սակայն կյանքը շարունակվում է եւ հարկավոր է ուրվագծել ապագան: Սակայն ինչպե՞ս: Պատասխան չկա: (Գեւորգյան Գոհար)

ՀՀԿ-ի քաղաքական գովազդի մասին չգիտեմ, բայց երգը լավն էր, որի ժամանակ մի պահ անգամ երկմտեցի. «Տեսնես ինչի՞ մասին է խոսքը»: Ինչեւէ, սակայն, ինչ որ լավ է, պետք է ազնվորեն խոստովանել՝ ազդեցիկ էր կարգախոսը, եթե հնարավոր լիներ իրականացնել. «Արավինենք մեր մտքին ու բազկին»: Ընտրություններում մի՞թե դրանք էական են: (Գեւորգյան Գոհար)

Չմոռանանք անդրադառնալ նաեւ քաղաքական գովազդի մի այլ տեսակ հանդիսացող գովազդային ցուցանակներին, որոնցով այս ընթացքում հեղեղված էր Երեւանը: Հետաքրքրական է, այդ ներկայացված կուսակցություններից կամ թեկնածուներից գոնե մեկն ունի՞ մի նախաձեռնություն ընտրություններից հետո նույն ջանասիրությամբ մաքրելու քաղաքը:

Եվ, վերջապես, կկատարվե՞ն ձեր տված խոստումները, երբ դեռ ընտրված կամ չընտրված «հացի խնդիր» եք ստեղծել երկրում, երբ չարչրկված ժողովուրդն է պարտավոր ընտրություններից հետո դատարկված քսակները լցնելու: Եվ քանի դեռ օրօրի սնկի նման աճում են կուսակցությունները մեր երկրում, ապա այս երկիրը երբեք ժողովրդավարության ուղին չի կարող հարթել, քանի որ ուղիները շատ են, իսկ ճանապարհները՝ փակ:

Իսկ վերջում, եւս մեկ անգամ նշենք, որ սրանք մեր տեսակետներն են եւ ինչպես յուրաքանչյուրը, մենք էլ ունենք արտահայտելու իրավունք:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ՆԱՐԻՐ
ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի
3-րդ կուրս

ԱՍՈՒԼԻՍ

Դաշնակներին կոալիցիոն կառավարության մեջ մտնելու առաջարկ է արվել

Բայց նրանք չեն շտապում որոշում կայացնել

ՀՅ Դաշնակցության Հայաստանի Գերագույն մարմինն իր հեսընտրական հայտարարության մեջ մայիսի 25-ի քվեարկությունը չի գնահատում «լիարժեքորեն ազատ, արդար եւ թափանցիկ»: Ընտրական գործընթացների սկզբի ու ավարտի դաշնակցական վերլուծությունը բավական խիստ է ու դառնահամ: «Համատարած ու բացահայտ ընտրակաշառքներ ե՛ւ քաղաքական ուժերի, ե՛ւ թեկնածուների կողմից: Քվեների առուվաճառք, քաղաքական անբարոյականություն, բռնություն, ընտրակեղծիքներ», նման էպիտետներով ու արտահայտություններով լի է հայտարարության ոչ այնքան ծավալուն տեքստը:

Դաշնակցականներն արձանագրում են, որ խախտումներով ու ընտրակեղծիքներով են ընթացել ընտրությունները թիվ 3, 12, 17, 29, 30 եւ 56 ընտրատարածքներում: «Իշխող կուսակցությունը վարչական լծակներն անմնացորդ օգտագործեց իր ձայներն արհեստականորեն ավելացնելու, նաեւ իր հովանավորյալ քաղաքական ուժերին ու մեծամասնական թեկնածուներին աջակցելու նպատակով», նշվում է հայտարարությունում: Ընտրախարդավանքային դերակատարներ դարձան Սյունիքի, Արմավիրի, Տավուշի, Արարատի, Լոռու տեղական ինքնակառավարման մարմինները:

Արձանագրվում է նաեւ, որ այս ամենի հետեւանքով նորընտիր Աժ-ի կազմը լիարժեք չի արտահայտում քաղաքական ուժերի իրական հարաբերակցությունը: Խորհրդարանական ակնկալիքները չբավարարած կուսակցությունը, այնուամենայնիվ, Աժ ընտրություններն ընդունում է կայացած, իր մեկնաբանությամբ, հաշվի առնելով եւ շեշտելով երկրի կայունությունը պահպանելու գերխնդիրը:

Ընտրություններից հետո իրենց մեկնաբանությամբ լռությունն ընդմիջող պատգամավորական հայտարարությունը հրապարակեցին ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը եւ Դաշնակցության՝ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ Աղվան Վարդանյանը:

Նրանք մեկնաբանեցին այս պահին ե՛ւ իրենց, ե՛ւ իշխանության վերին օղակների մյուս հավակնողներին հուզող հարցը՝ ներկա լինելո՞ւ է արդյոք Դաշնակցությունը կառավարության կազմում: Արմեն Ռուստամյանը հայտնեց, որ կոալիցիոն կառավարության մեջ մտնելու առաջարկ իրենց արվել է, բայց դաշնակները չեն շտապում: Հարցը քննարկումների փուլում է: Նախ՝ պիտի պարզեն, ի՞նչ սկզբունքներով ու կարգով ձեւավորվելիք կոալիցիայի մասին է խոսքը, ինչպե՞ս է այն բաշխելու քաղաքական պատասխանատվությունների ծանր բեռը, ի՞նչ տնտեսական առաջնահերթություններ է մատնանշելու, որքանո՞վ են դրանք համապատասխանում Դաշնակցության ծրագրերին:

Վարչապետի ակնարկ-հայտարարությունը, թե իրենք մտադիր չեն ո՛չ վարչապետի, ո՛չ էլ ուժային նախարարությունների աթոռները զիջել որեւէ ուժի, Աղվան Վարդանյանը հակադարձեց այսպես. «Որեւէ մեկը երբեք չի մտածել, որ պատգամանության նախարարի պատգոնը Հանրապետական կուսակցության մենաշնորհն է: Բացի այդ, գործող սահմանադրության համաձայն, վարչապետին նշանակում է գործող նախագահը եւ իրադարձություններից առաջ ընկնել, նշանակում է ճիշտ չգնահատել իրավիճակը»:

Խորհրդարանական ընտրություններում «Օրինաց երկրի» հաղթանակին եւս Դաշնակցությունը խիստ վերապահումով է վերաբերվում, պարզ ակնարկելով ընտրախախտումներին նրանց ակտիվ մասնակցությունը:

Իսկ թիվ 30, 50, 56 ընտրատարածքների դաշնակցական մեծամասնական թեկնածուները մտադիր են դիմել Սահմանադրական դատարան՝ վիճարկելու ընտրությունների արդյունքները:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Օրրանը» դարձավ շաբաթաթերթ

Ազգմավարական եւ ազգային հետազոտությունների կենտրոնի «Օրրան» օրաթերթի վերջին համարը լույս տեսավ մայիսի 31-ին: Այսուհետեւ թերթը լույս կտեսնի շաբաթը մեկ անգամ՝ ուրբաթ օրերին: Դեռեւս անորոշ է, թե ֆինանսական առկա խնդիրների պայմաններում որքան կգոյատեւի թերթը: Ինչպես մեզ հաղորդեց կենտրոնի գիտական ծրագրերի ղեկավար Թաթուլ Մանասերյանը, թերթի խմբագրական կազմում որեւէ փոփոխություն չի եղել:

Ինչ վերաբերում է ազգմավարական կենտրոնի հետագա գործունեությանը, ապա «Ազգի» նախորդ համարում (31 մայիսի, 2003) արդեն տեղեկացրել էինք, որ այսուհետեւ կգործի որոշակի սահմանափակությամբ:

Օրենսդիր մարմինը գրեթե լրիվ կազմվեց

Սկիզբը էջ 1

Մեծամասնական ընտրակարգի դեպքում իրավիճակը հետեւյալն է. ընտրատարածքներից պատգամավոր են դարձել 9 հանրապետականներ (Գեւորգ Հակոբյան, Հենրիկ Աբրահամյան, Նահապետ Գեւորգյան, Ռաֆիկ Գրիգորյան, Մարտին Սուքիասյան, Սուքիաս Ավետիսյան, Ասոն Աղաբաբյան, Մկրտիչ Մկրտչյան, Հովիկ Աբովյան): Սրան գումարվում է նաեւ անկուսակցականների 35 հոգանոց բանակը, որի գերակշիռ մասը հստակ բաշխված կուսակցական պատկանելություն ունի:

Ի դեպ, մեծամասնական ցուցակի մասին. ընտրվածները կամ «ընտրվածները» մեկ-երկու բացառությամբ օրինաշեղերկրականներ կամ հանրապետականներ են:

«Արդարություն» դաշինքն ապագա խորհրդարանում կունենա 14 պատգամավոր՝ Ստեփան Դեմիրճյան, Արամ Սարգսյան, Վազգեն Մանուկյան, Գրիգոր Հարությունյան, Շավարշ Քոչարյան, Ստեփան Զաքարյան, Արշակ Սադոյան, Սերգեյ Իսրայելյան, Արամ Գասպարի Սարգսյան, Հրանտ Խաչատրյան, Թաթուլ Մանասերյան, Վիկտոր Դալլաքյան, Վարդան Մկրտչյան, Էդմոն Ծատուրյան: Սա եւս ըստ համամասնական ցուցակի եւ անշուշտ ֆրակցիայի վերջնական կազմը չէ:

«Օրինաց երկիրը» ներկայացված է մոտավորապես այսպիսի կազմով. 12 համամասնական ընտրակարգով պատգամավորներ՝ Արթուր Բաղդասարյան, Սերգո Երիցյան, Թամարա Պողոսյան, Գագիկ Մխեյան, Սայադ Ջախարյան, Արշակ Մխիթարյան, Ալեքսան Պետրոսյան, Էդուարդ Գաբրիելյան, Արա Արամյան, Արկադի Համբարձումյան, Մհեր Շահգելդյան, Արտակ Աբաֆելյան: «Օրինաց երկիր» ֆրակցիայի մաս կկազմեն նաեւ մեծամասնական ընտրակարգով խորհրդարանական դարձած Արտուշ Սիմոնյանը, Գրիգոր Մարգարյանը, Սամվել Սահակյանը, Խաչիկ Պետրոսյանը, Վոսմ Գյուլզադյանը, Սամվել Շահգալդյանը, Արամ Հարությունյանը, Մելիք Մանուկյանը, Սամվել Բալասանյանը, Սերյոժա Արարհամյանը:

Պատասխանատվությունը՝ Գուրգեն Արսենյան, Լեւոն Պողոսյան, Սերգեյ Սարգսյան, Գագիկ Սամբոլցյան, Արթուր Պետրոսյան, Հռիփսիմե Ավետիսյան:

Ներկայացվածը, ինչպես արդեն նշեցինք, ծեւավորվող խորհրդարանի դեռեւս մոտավոր կազմն է, բայց արդեն հնարավորություն է տալիս պատկերացնելու՝ ինչպիսին են լինելու մեր Ազգային ժողովն ու կառավարությունը: Իհարկե, շատ են նաեւ անուններ, որոնք անծանոթ են ընթերցողին: Ավելի ճիշտ կլիներ, երեւի, նրանց մականունները գրել:

Թեեւ հանրապետության բազմաթիվ ընտրատարածքներում կարելի էր ընտրություններն անվավեր ճանաչել, այդպես եղավ ընդամենը 3-ում՝ թիվ 12, 29 եւ 41: Այս ընտրատարածքների պատգամավորները հայտնի կդառնան հունիսի 14–15-ին:

Պատասխանատու: Նորընտիր խորհրդարանը շուտով կսկսի իր աշխատանքները: Շուտ է դեռեւս գնահատել, թե ինչպիսի օրենքներ կընդունվեն, այնուամենայնիվ, պետք է հրատեւ լինել:

Մ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

«Ազգի» ընթերցողներին արդեն տեղեկացրել ենք Ֆրանսիայի Բուս-դյու-Ռոն նահանգի մարզային խորհրդի նախագահ, սենատոր Ժան Նոել Գերինիի գլխավորած պատվիրակության այցի մասին: Շաբաթ օրը նրանք մեկնեցին Գյումրի, իսկ կիրակի՝ Էջմիածին: Շիրակի մարզի մուտքի մոտ պատվիրակությանը դիմավորեցին մարզի մշակութային խմբերը՝ աղ ու հացով, դհոլ-զուռնայով, մարզպետ Ֆելիքս Փիրումյանի գլխավորությամբ: Քիչ անց պատվիրակությունն այցելեց թիվ 10 ֆրանսիական դպրոց (տնօրեն՝ Մարտին Փաշայան), որը 1993 թ. ֆրանսիական կառավարության աջակցությամբ ամբողջովին վերականգնվել եւ այժմ էլ 150 մանկավարժներով կրթում է 1200 սաների: Հյուրերը դպրոցում հիացան աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրությամբ, դիտեցին ֆրանսերենով «Փոքրիկ իշխանը» բեմականացումը: Սենատոր Գերինին խոսացավ փոքրիկ դերասաններին հրավիրել Ֆրանսիա՝ աշնանն անցկացվող հայկական օրերի փառատոնին մասնակցելու: 15 ամիս առաջ սենատոր Ժան Նոել Գերինին ու Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը ստորագրել էին համաձայնագիր՝ մշակույթի, կրթության եւ առողջապահության բնագավառների շուրջ: Ֆրանսիական պատվիրակությունն այցելեց Կումայրի թաղամաս,

ուր արդեն կառուցվել էր համագործակցության առաջին պտուղ՝ բժշկական կենտրոն-ատամնաբուժական դիսպանսերը: Գյումրեցիների անունից խաղաղաթե Վ. Ղուկասյանը խորին շնորհակալություն հայտնեց հրաշալի նվերի համար: Հատուկ բուժկենտրոնի բացման ու օրհնության առիթով ներկա էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդը Մայր աթոռի պատվիրակությամբ: Դեսպան Անրի Կյունին իր ելույթում հատկ նշեց, որ մի նոր բարեկամական գործընթաց է սկսվել, եւ այն հրաշալի շարունակություն կունենա: Իսկ սենատոր Գերինին ատամնաբուժական դիսպանսերի բացումը հատկապես Գյումրիում կարեւորեց: «Բարի կամքը եւ համոզմունքի ուժը այն լավագույն թթխմորն է, որ թույլ է տալիս նման նախաձեռնություններ իրականացումը», նշեց սենատորը եւ խոսացավ բուժկենտրոնի հարեւանությամբ գտնվող հիվանդանոցի համար գնել ժամանակակից սարքավորումներ, հանձնարարականներ տվեց ուսումնասիրելու մանկահասակ երեխաների հարցերով զբաղվող կենտրոն ստեղծելու խնդիրները, եւ խոսացավ աջակցել:

Վեհափառ հայրապետը նշեց. «Այս միջոցառումը վկայությունն է հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների բարեկամության, որը բազում նման բարի պտուղներ է պարգեւել մեր ժողովրդին, որը հաստատվեց մեր Ֆրանսիա հովվապետական այցի ժամանակ»: Վեհափառը գոհունակություն հայտնեց Ֆրանսիայի կառավարությանը եւ ժողովրդին այն ջերմ սիրո համար, որ տածում են հայերիս հանդեպ՝ եղեռնից մազապուրծ ժողովրդին սատարելու եւ պետական ատյաններով արդար ծայնը բարձրացնելու Ցեղասպանության ճանաչման հարցում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդի հանդիսապետությամբ եւ Շիրակի թեմի առաջնորդ Միխայել եպս. Աջապահյանի մասնակցությամբ օրհնվեց բուժդիսպանսերը: Կտրվեց կարմիր ժապավենը, եւ բացվեց բուժկենտրոնը՝ նորագույն սարքավորումներով ու ժամանակակից կառույցով: Այնուհետեւ հյուրերն այցելեցին Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, ծաղկեպսակներ դրեցին երկրաշարժի զոհերի հիշատակին, եղան թիվ 42 միջնակարգ ֆրանսիական դպրոցում, որի կահավորման եւ սարքավորումներ ձեռք բերելու համար տրամադրել էին 15 հազար եվրո: Ավելի ուշ պատվիրակությունը հյուրընկալվեց Գյումրու արհեստների ու արվեստների ակադեմիայում:

Կիրակի օրը պատվիրակությունը, դեսպան Անրի Կյունին եւ մշակութային հարցերով խորհրդական Ժերար Մարտենն իրենց կանանց հետ, այցելեցին էջմիածին՝ մասնակցելու Ֆրանսիական դիսպանսեր-ատամնաբուժարանի հիմնարկեքի եւ ցուցատախտակի բացման արարողությանը: 1902 թ. երջանկահիշատակ կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հիմնած Գեւորգյան ճեմարանի հիվանդանոցի շենքը պատվիրակության ջանքերով կկառուցվի ու կդառնա մի նոր ատամնաբուժական դիսպանսեր՝ ծառայելով էջմիածնի բնակչությանը: Վեհափառ հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց ատամնաբուժական կենտրոնի օրհնության կարգը եւ հուշարարի բացման պաշտոնական արարողությունը: Ի պատիվ պատվիրակության եւ ՀՀ կառավարության անդամների, Վեհափառ հայրապետը վեհարանում ընդունելություն էր կազմակերպել, որի ընթացքում Ամենայն հայոց կաթողիկոսը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց սենատոր Ժան Նոել Գերինիին՝ «իբրեւ մեծագույն գնահատական նրա հայանպաստ գործունեության»: Հյուրերը մասնակցեցին պատարագին ու հաղորդվեցին էջմիածնին:

Երեւանից մեկնելուց առաջ խնդրեցի սենատոր Գերինիին կիսել իր տպավորությունները: «Ես վերադառնում եմ ջերմ ու մեծ տպավորություններով: Հուզումներ ապրեցի Երեւանում, Գյումրիում իմ բարեկամներին հանդիպելով ու տեսնելով, որ մեր ծրագրերը երկուստեք իրականանում են: Վեհափառի ձեռքով այդ բարձրագույն շքանշանին արժանանալն անակնկալ էր: Ես կարծում եմ, արժանի չէի այդ բարձր պարգեւին: Ես օգնում եմ Հայաստանին, որովհետեւ սիրում եմ այս երկիրը, հայերին, եւ անում եմ այն, ինչ իմ պարտքն է՝ օգնել, համագործակցել: Իսկ ծրագրից դուրս ինչ խոստումներ տվել եմ, մինչեւ ուշ աշուն կկատարեմ, հավատացեք», նշեց սենատորը եւ չթաքցրեց, որ մեծ սիրով կպարտեր այս հրաշք երկրում՝ Հայաստանում, հայերի հետ կողք-կողքի:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Սարդասիրական օգնությունը վերածվեց համագործակցության

Ավարտվեց ֆրանսիական պատվիրակության այցը Հայաստան

ԱՊՀ անվտանգության մարմինների ներկայացուցիչները կհավաքվեն Երեւանում

Այսօր Երեւանում կմեկնարկի ԱՊՀ անդամ երկրների Անվտանգության մարմինների եւ հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի 14-րդ նիստը:

Ըստ ՀՀ անվտանգության ազգային խորհրդի լրատվական գործակալության տարածած հաղորդագրության, երկօրյա նիստի օրակարգում կլինի միջազգային ահաբեկչական կազմակերպությունների՝ ԱՊՀ երկրների պետական սահմաններ թափանցելն արգելելու համար տեղ միջոցների մշակումը: Նիստի մասնակիցները կքննարկեն էներգետիկ, նավթային, գազային համալիրներում տեղի ունեցող արտակարգ իրադարձությունների շուտափույթ զգուշացմանն առնչվող մանրամասներ:

Կամփոփվեն ԱՊՀ անդամ երկրների հատուկ ծառայությունների ու անվտանգության մարմինների՝ միջազգային ահաբեկչության եւ հանցավորության դեմ պայքարի 2000-2003-թթ. արդյունքները: Նիստի օրակարգում են նաեւ Ուկրաինայում անցկացվելիք՝ Համագործակցության անդամ երկրների հակաահաբեկչական միավորումների տակտիկա-մասնագիտական զորավարժությունների կազմակերպման մանրամասները:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

Ուխտագնացություն Մայր աթոռ Սբ. Էջմիածնի 1700-ամյակի առիթով

Մայր աթոռ Սբ. Էջմիածնի օծման 1700-ամյակի հոբելյանական արարողությունների ընթացքում թեմական առաջնորդներն իրենց հոգեւորականների եւ հավատացյալների ուղեկցությամբ ուխտի են գալիս Սբ. Էջմիածին՝ եւս մեկ անգամ վերահաստատելու իրենց ուխտն առ Աստված եւ իրենց հավատարմությունն ու սերն արտահայտելու համայն հայության կենտրոն Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հանդեպ: Արդեն ուխտի են գնացել Կոտայքի, Շիրակի, Գուգարքի, Արմավիրի, Արագածոտնի թեմերի եւ մարզերի հավատացյալներն ու հոգեւորականները: Անցած կիրակի էլ ուխտի էին եկել Հունաստանի թեմի հավատացյալները՝ թեմական առաջնորդ Ոսկան արք. Գալփակյանի գլխավորությամբ: Երեկ, վաղ առավոտից Երեւանից 10 հազարից ավելի ուխտավորներ ու հոգեւորականներ Սուրբ Սարգիս եկեղեցուց ճանապարհվեցին դեպի Մայր աթոռ: Ուխտագնացներին առաջնորդում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպս. Կճոյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը եւ այլ անձինք: Կառավարության անդամների գլխավորությամբ թափորը հասավ Մայր աթոռ Սբ. Էջմիածին ու մասնակցեց եռիսկոպոսական պատարագին, որի պատարագիչն էր Նավասարդ սրբազանը՝ Արարատյան թեմի եւ եռիսկոպոսական դասի մասնակցությամբ: Պատարագին մասնակցում էին պետական ու պաշտոնական այրեր, դեսպաններ, բազմաթիվ հյուրեր ու սփյուռքահայեր:

Մ. Մ.

Այս շաբաթ զով կլինի

Քաղաքական շիկացումների հանդարտումներին համընթաց այս շաբաթվա ընթացքում շոգ եղանակը եւս կմեղմանա: Այժմ Երեւանում ցերեկային ջերմաստիճանը 20-22 աստիճանի սահմաններում է, հիդրոօդերեւութաբանների կանխատեսմամբ, մինչեւ շաբաթավերջ կտատանվի ընդամենը 2 աստիճանով՝ հասնելով 24-ի: Տեղումները 3 օր կշարունակեն մերթ ընդ մերթ այցի գալ մեզ, հետո աստիճանաբար նվազելով՝ կթուլանան:

Խորհրդանշական է, որ հունիսի 6-ին կանխատեսվում է անամպ ու խաղաղ եղանակ: Այդ օրը Երեւանում աննախադեպ իրադարձություն կկայանա՝ «Հույսի ավան»-ում 20 անապահով ընտանիք շեղ առանձնատներում բնակարանամուտ կտոնի:

Կ. Դ.

Հայ ֆիլատելիայի բարդ ժամանակները

Հայաստանի ֆիլատելիստների միության 10-րդ համագումարում

Հայաստանի նամականիշների հավաքողների առաջնահերթ խնդիրները քննարկեց հանրապետության ֆիլատելիստների միության 10-րդ համագումարը, որը տեղի ունեցավ հունիսի 1-ին Երեւանում:

Հարուստ ավանդույթներ ունեցող կազմակերպությունն իր հերթական համաժողովին է եկել ծայրաստիճան բարդ վիճակում: Ֆինանսական, տնտեսական եւ այլ հիմնահարցերի հետեւանքով գործնականորեն տրոհվել են ֆիլատելիստների միության կառույցները հանրապետության քաղաքներում ու մարզերում: Հայաստանյան ֆիլատելիան տարիք է առնում է, եւ այդ երեւույթի պատճառներից է պատանիների ու դպրոցականների հետ տարված ոչ բավարար աշխատանքը: ՀՀ նամականիշների բարձր անվանական գինը (նոմինալը) դրանք անմատչելի են դարձնում հավաքողների լայն զանգվածների եւ, առաջին հերթին, երեխաների համար: Դրա մասին ցավով էին խոսում համագումարի պատվիրակները:

Ֆիլատելիստական շարժումը Հայաստանում սկզբնավորվել է 1922 թվականին, երբ ստեղծվել է «Ֆիլանում» («Ֆիլատելիա եւ նումիզմատիկա») ընկերությունը: 1969 թվականին ձեւավորվել է Ֆիլատելիստների համամիութենական ընկերության հայկական հանրապետական բաժանմունքը, որը 1992 թվականին վերակազմավորվեց Հայաստանի ֆիլատելիստների միության: Եթե 90-ական թվականներին կազմակերպության շարքերում կար մոտ 3 հազար անդամ, ապա այսօր երկրի ֆիլատելիստական ակտիվը չի գերազանցում 70 հոգու:

Չնայած այս բոլոր դժվարություններին, վերջին տարիներին Հայաստանի ֆիլատելիստները մասնակցել են մի շարք համաշխարհային ու միջազգային ցուցահանդեսների, նվաճել մեդալներ ու այլ պարգեւներ: Այսօր նրանք ակնկալում են Հայաստանի նախագահի ու կառավարության, հանրապետության գործարար շրջանների, սփյուռքահայ հայրենակիցների աջակցությունն ու օգնությունը: Առաջնային խնդիր են ճանաչվել աշխատանքները պատանիների հետ, հայկական նամականիշի տարածումը երեխաների ու դպրոցականների շրջանում:

Ելույթ ունեցողներն արտահայտվեցին Ֆիլատելիայի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՊ) եւ Ֆիլատելիստական ընկերակցությունների եվրոպական ֆեդերացիայի (ՖԵՊԱ) հետ համագործակցության աշխուժացման օգտին (դրանց Հայաստանն անդամակցել է համապատասխանաբար 1993 եւ 1996 թվականներին): Դա առավել կարեւոր է, եթե հաշվի առնենք, որ ԱՊՀ պետություններից ՖԻՊ-ի ու ՖԵՊԱ-ի անդամ են միայն Հայաստանը, Բելառուսը, Ռուսաստանն ու Ուկրաինան: Համագումարն այլընտրանքային հիմունքներով 2 թեկնածուներից Հայաստանի ֆիլատելիստների միության նոր նախագահ ընտրեց լրագրող Տիգրան Լիլոյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼԱՏԵԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Օրախնդիր

Հստակեցվել է բուհական ընդունելության խնդիրների նախորդ տարիներին գործող կարգը

Ամեն տարի բուհական ընդունելության հնությունները մեկնարկից դեռ շատ առաջ հայտնվում են հասարակական հետաքրքրության կենտրոնում, գրեթե քաղաքական իրողություններին համարժեք բուռն հնարկումների արժանանում: Այս տարի, խորհրդարանական ընտրությունների սպերում, դրանք նվազ ուշադրության արժանացան: Սակայն բուհական շոգ ամառը դեռ առջևում է, եւ ոչ միայն դիմորդների շահագրգիռ հարազատների, այլեւ ողջ հասարակության ունկն ու միտը զբաղվածության նոր թեմա կունենան:

Բուհական հնությունների մեխանիզմն ու ընթացակարգը վերջին 15 տարում բազում փորձություններ կրեցին: Անվերջ ենթարկվելով միջամտությունների, դրանք ի վերջո փորձանք էին դառնում դիմորդի գլխին՝ շատ ազատ ճակատագրական դեր խաղալով: Գրեթե ամեն տարի ինչ-ինչ բնույթի փոփոխություններ անհայման իրականացվել են՝ գործող կարգը հարաբերականորեն անվիճարկելի տարբերակի հասցնելու նկատառումով: Այս տարվա փոփոխությունները բովանդակային բնույթ չունեն եւ հիմնականում կառուցվածքային կոսմետիկ սրբագրումներ են: «Պարզապես ամբողջովին հստակեցվել է մինչեւ նախորդ տարին գործող կարգը», մեզ հետ զրույցում ասաց ՀՀ կրթության եւ գիտության փոխնախարար Արա Ավետիսյանը: Այնուամենայնիվ, կարծում ենք, նրա նշած հստակեցումները բավական ծանրակշիռ կլինեն հնաբնթացի զգայաչափի այս կամ այն բնույթի տատանումներ առաջացնելու համար:

Հունիսի 1-ին եւ երեկ Երեւանում հանրապետության դպրոցների մեդալի թեկնածուները կենտրոնացված կարգով հանձնեցին առաջին 2 հնությունները հայոց լեզվից եւ մաթեմատիկայից: Սեկ հնությամբ բուհ ընդունվելու նրանց շնորհն էլի նույնն է: Բայց այս տարվանից իբրեւ որոշիչ հնություն կհանձնեն տվյալ բուհի կողմից որոշված առարկան եւս: Տնտեսագիտության մասնագիտությամբ դիմորդները, օրինակ, արդեն կհանձնեն ոչ թե մաթեմատիկայի, այլ օտար լեզվի հնություն: Իրավագիտություն մասնագիտության դեպքում այդ առարկան կլինի հայ ժողովրդի պատմությունը, կիրառական մաթեմատիկայի ոլորտը նախընտրած դիմորդները եւս այս տարի մաթեմատիկայի փոխարեն կհանձնեն ֆիզիկա: Այսինքն՝ մեդալի համար հանձնվող մաթեմատիկայի եւ հայոց լեզվի հնությունները բուհական ընդունելության ժամանակ էլ չեն կրկնվի: Եվ վճռորոշ կդառնա տվյալ բուհի համար առավել կարեւոր մի երրորդ՝ մասնագիտական առարկայի հնությունը: Առաջներում, օրինակ, իրավագիտության եւ տնտեսագիտության մասնագիտացմամբ դիմորդներն ընդունելության ժամանակ փաստորեն հանձնում էին նույն հնությունները, ինչ դպրոցական կենտրոնացված հնության ժամանակ՝ հայոց լեզու եւ մաթեմատիկա: Իսկ բժշկական համալսարան դիմող մեդալակիրները, իբրեւ ընդունելության հնություն, պիտի հանձնեին նաեւ երրորդ առարկան՝ քիմիա, ֆիզիկա կամ կենսաբանություն:

Հաջորդ փոփոխությունը վերաբերում է հայոց եւ օտար լեզուների հնություններին: Նախորդ տարիներին մասնագիտական ֆակուլտետներում դիմորդները հնություն էին հանձնում հայոց լեզու 1, անգլերեն 1, համեմատաբար բարդացված տարբերակներով, ոչ մասնագիտականի դեպքում՝ թիվ 2՝ համեմատաբար պարզեցված տարբերակով: Սակայն այդ երկու տարբերակներում ներառված առաջադրանքների իրարից հետ կամ դժվար լինելը երբեմն նույնիսկ մասնագետների շրջանում վիճաբանությունների նյութ էր դառնում եւ մշակված կարգից դժգոհությունների ու հիասթափության պատճառ: Այս տարի լեզվական հնությունները կանցկացվեն մեկ միասնական տարբերակով: Մասնագետներն այս անգամ այդպես են նպատակահարմար գտել:

Մասնակի խմբագրվել են նաեւ հարցարանները՝ կրելով սխեմատիկ փոփոխություններ: Իրատնման առաջադրանքները 1 կետի տակ են առնվել, ոչ նպատակահարմար, նույնաբնույթ հարցերը հանվել են:

Նախարարության մասնագիտական կրթության վարչության պետ Ռուբեն Գասպարյանը ծանոթացրեց դիմորդների համար սահմանված արտոնությունների սրբագրումներին: Գործող կարգի ոչ էական, այնուամենայնիվ, փաստաթղթային քաղաքներից մասնակի ձերբազատող պարզեցումը վերաբերում է հաշմանդամներին: Հակառակ նախկին կարգի՝ մանկուց հաշմանդամության սահմանագիծը 16 տարեկանից «մղվել» է մինչեւ 18 տարեկանը, եւ 16-ի սահմանն անցած դիմորդներից 1-ին եւ 2-րդ կարգի հաշմանդամությունը հաստատող նոր փաստաթուղթ չի պահանջվի: Առավել մարդասիրական է մյուս նորույթը՝ առանց ծնողական խնամի մինչեւ 22 տարեկան երեխաները բուհի անվճար համակարգ կարող են ընդունվել հավաքելով նույնիսկ վճարովի համար հավաքված անցողիկ միավորներով: Նաեւ զոհված ազատամարտիկների երեխաները դրական միավորներ հավաքելու դեպքում միանգամից կհավաքագրվեն անվճար համակարգում: Մասնակի փոփոխություն է եղել նաեւ գնահատման չափանիշներում: Փորձ է արվել գրավոր աշխատանքների գնահատման գործընթացում օժանդակ մանրամասն ներմուծելու միջոցով նվազեցնել կամ մեղմացնել գնահատականի վիճարկման հավանականությունը: Կոնկրետ մաթեմատիկա առարկայի դեպքում, օրինակ, գնահատման համակարգը գործում էր կես բալանոց քայլերով եւ չէր նշվում, թե ինչ բնույթի սխալների դեպքում է հանվում, օրինակ, կես միավորը: Այս տարի արդեն մշակված չափորոշիչները դրանց վերաբերյալ որոշակի պատկերացումներ կտան դիմորդին:

Ինչ վերաբերում է կրթական շուկայում պահանջարկի ու առաջարկի հավասարակշռության խնդրին, ապա, ինչպես անցած տարիներին, այս անգամ էլ այն ամենուր տիրապետող դարձած տարբերային տնտեսավարման պատանդը կդառնա: Այսինքն՝ մենք կունենանք ապագա մանկավարժների, բժիշկների, տնտեսագետների հոծ բազմություն, հընթացս իրականացնելով նաեւ կրթական ու առողջապահական շուկայի օպտիմալացման ցավոտ ծրագիր:

ՄՈՒՇԵՂ ՁԱՆՅԱՆ

Ի սկզբանե էր դատապարտված մայրուղին

Այդ մասին ճանապարհաշինարարները նախազգուշացվել էին

Դիլիջանից Նոյեմբերյան, Դիլիջանից Իջեւան տանող ճանապարհը գարնանային վարարումներից ակտիվացած սողանքների հետեւանքով ահռելի վնասներ է կրել, շատ հատվածներում ասֆալտը լվացվել, գնացել է: Մայրուղու տարբեր տեղերում ձորակներ են առաջացել, Իջեւանից Դիլիջան ճանապարհին երկաթգծի մի հատված հեղեղը քշել-տարել է, տասնյակ կամուրջներ փլվել են: Մի քանի օր առաջ այս մասին **«Ազգի»** խմբագրություն ահազանգեց գեոերկրաբան Ռուբեն Յաղոյանը, որը մի շաբաթ առաջ եղել է այդ տարածքում եւ ավերածությունների ականատես դարձել: Դեռեւս 2001 թ., երբ նոր պիտի մեկնարկեր «Լինսի» հիմնադրամով իրականացվող հանրապետական ճանապարհաշինության 38 միլիոնանոց ծրագիրը, մայրուղիներին կից քանդման ենթակա, սողանքային տարածքների մասին գիտնականը զգուշացրել է «Լինսի» գրասենյակին: Նրան պատասխանել են, թե համապատասխան գումարներ չունեն հետազոտական եւ պատշաճ աշխատանքների համար: Հնարավոր վտանգի մասին հրապարակումներ են եղել նաեւ հանրապետական մամուլում՝ «Հայաստանի Հանրապետություն» (2001 թ. ապրիլ), **«Ազգ»** (2002 թ. դեկտեմբեր) օրաթերթերում: Ի դեպ, այդ հոդվածներում իբրեւ վտանգավոր տեղամասեր հատուկ հղումներով առանձնացվել են նաեւ այսօր արդեն քանդված մայրուղիները: Այնուամենայնիվ, «Իրավունք» թերթի այս տարվա թիվ 35 համարում տրված հարցազրույցում ճանապարհաշինության ԾԻԳ-ի տնօրեն Էդուարդ Բեզոյանը Դիլիջան-Իջեւան ճանապարհի բազում հատվածների ավերման համար շինարարներին չի մեղադրում՝ հայտարարելով նաեւ, որ Աղստեւ գետը երբեք աղեղի աղբյուր չի եղել: Հիշեցնենք, որ անցած տարի եւս Աղստեւը վարարել ու նույնիսկ քանդել էր Հաղարծին գյուղի տները: Եվ ընդհանրապես, այս գետը հալոցքային ջրերով սնման մեծ ավազան ունի եւ գրեթե ամեն տարի վնասներ է պատճառում շրջակայքին: Այսօր եւս գետի հովտի բազում գյուղեր ու ձորակներ արտածին վտանգավոր երեւույթների՝ նստվածք, հեղեղ, սողանք, մշտական վտանգի տակ են: Այնպես որ, ե՛ւ տեսականորեն, ե՛ւ գործնականում ճանապարհաշինարարները տեղյակ էին հնարավոր աղետներին: Հույսը երեւի դրել էին բնության մեծահոգության վրա: Ոչ մի օգուտ, եթե նույնիսկ շինարարությունն ամենաբարձր որակով է կատարվել: Ի սկզբանե կանխորոշված էր մայրուղիների ճակատագիրը, եթե սողանքներին մեծ կամ արտածին

վտանգավոր երեւույթների գոտում են:

2001 թ. ավստրիական ճանապարհաշինական ֆիրմաներից մեկը նշված հատվածներում վերանորոգման հետազոտական որոշակի աշխատանքներ է կատարել եւ հատուկ զգուշացրել հայ մասնագետներին՝ շինարարական աշխատանքներ իրականացնելիս նման տեղամասերին առանձնակի ուշադրություն դարձնել: Մինչ այդ, դեռեւս 1989 թ. միութենական հատուկ որոշմամբ մեր հանրապետության 3 նախարարական կառույցների (ճանապարհաշինական, ֆինանսների, հիդրոշինարարության) բոլոր նախագծային ինստիտուտներին հանձնարարականներ հղվեցին շինարարական աշխատանքների ժամանակ սողանքային տեղամասերի ամրացման նոր մեթոդներ կիրառելու վերաբերյալ:

Ինչեւէ, եղածն արդեն եղել է, որը լուծում ունի, եւ գիտնականների հավաստմամբ, ոչ ծախսատար ու աշխատատար մեթոդներով, որոնք լայնորեն հայտնի են եւ կիրառվում են աշխարհում: Սողացող լանջերի ամրացման համար օգտագործվում է, այսպես ասած, գաբիոնների կիրառման սկզբունքը: Նախկինում այն հաջողությամբ կիրառվել է նաեւ Հայաստանի ճանապարհաշինության մեջ: Սրանք ցանցկեն կապարներ են, որոնց մեջ լցնում են հիմնականում տեղական քարաստակներ, ճանապարհամերձ գետերի գլաքարեր: Տասնյակ-հարյուրավոր տոննաներով ծանրանալով՝ գաբիոնները հաջողությամբ առնում են հեղեղների դեմը, եւ մերձակա ճանապարհն անվտանգ է մնում: Սա հատակ եւ խիստ արդյունավետ միջոց է:

Պրոբլեմը շարունակաբար անլուծելի թողնելով, միայն ավելի զարգացնելու ենք այն, կրկնապատկելու եւ եռապատկելու ծախսվելիք միջոցները: Հատկապես եթե անընդմեջ ավերիչ էներգիա կուտակող սողանքները շրթայազերծ լինելու փորձի առիթի են սպասում:

Այս տարի ավարտվելու է Սեւան-Դիլիջան թունելի շինարարությունը: Դեպի Դիլիջան դուրս եկող ճանապարհը լայնացնելու ընթացքում շինարարներն անվերջ տաճ անակնկալների են բախվում՝ փլուզումները նորանոր վնասների պատճառ են դառնում: Այդպես էլ լինելու էր, քանի որ ճանապարհաշինարարը կույր նման խարխափելով է աշխատում՝ առանց իմանալու, թե երկրաբանական ինչ տեղամասում է աշխատում, եւ ինչ է լինելու ամեն անգամ, երբ էքսկավատորի շերեփն առնում է հողին: Այստեղ հիմնականում հողմնահար ապարներ են, փորձիկ միջամտությունը պարզապես կարող է էլ ավելի աշխուժացնել փլուզումները եւ ընդհանրապես ճանապարհը հիմնովին փակելու սպառնալիք առաջացնել: Հողմնահար այդ լանջերի բուժման համար եւս ողջ աշխարհին հայտնի մեթոդ կա՝ գեոտեքսիլ՝ պոլիէթիլենային, պոլիպրոպիլենային ցանցերի օգտագործումը: Սրանք եւս լցնում-ծանրացնում են տեղական ապարներով եւ փռում վտանգավոր տեղամասերի վրա: Սա նույնպես խիստ էժան մեթոդ է. պոլիէթիլենը մեր ամենօրյա կենցաղում օգտագործվող սովորական ցելոֆանն է, որի արտադրությունը տարածված է նաեւ Հայաստանում: Այս մեթոդն, ի դեպ, կարելի է օգտագործել նաեւ Մասիսի, Արարատի գեղեցամերձ տները խոնավությունից փրկելու համար: Քանի որ գեոտեքսիլը ջրի տարում:

ՀՀ նախագահի նախաձեռնությամբ վերահսկողական ծառայությունը հանձնաժողով է կազմել, որը պիտի պարզաբանի «Լինսիի» ծրագրով իրականացվող ճանապարհաշինության, մեղմ ասած, վրիպումներն ու թերացումները, որոնք հսկայական գումարների կորուստ պատճառ են դարձել: Ասենք, որ ամեն ամիս հանրապետության ողջ տարածքում իրականացվող շինարարության համար ընդհանուր առմամբ ծախսվում է 10 մլն դոլար: Ճանապարհաշինություն ԾԻԳ-ի կառուցած Դիլիջան-Իջեւան, Դիլիջան-Վանաձոր միջպետական նշանակության մայրուղիների շատ հատվածներ փակել են ժայռաբեկորների հսկա զանգվածները: Այդ տխուր պատկերներն ի վերջո աղացուցեցին դաժան ճշմարտությունը՝ բնության հետ խաղալը վտանգավոր է: Վերահսկողական ծառայության հանձնաժողովն ուսումնասիրելու ու վերլուծելու շատ բան ունի. նախ ինչո՞վ բացատրել, որ ճանապարհաշինական նախագծերը կազմվել են առանց ճանապարհամերձ սողանքների եւ ընդհանրապես արտածին վտանգավոր երեւույթների դեմ պաշտպանական միջոցառումների կանխատեսման: Պարզ է, որ այդ միջոցառումները բարձրացնելու էին շինարարության արժեքը, բայց ո՞ւմ եւ ինչո՞ւ էր ձեռնտու անկատար նախագիծը: Նշված մայրուղիներն առանձին հատվածներով նախագծել են «Արցախ նախագիծ» եւ «Տրանս նախագիծ» ՓԲԸ-երը: Հատկապես վերջինս լավ իրազեկ էր, տարիներ զբաղվել է նման խնդիրներով եւ թերաս նախագծումներն անկատար ըմբռնումի հետեւանք լինել չէին կարող: Իրողությանը հովանի դարձած հիմնապատճառ է նաեւ նախագծման գործընթացի հսկողության բացակայությունը: Ավտոմոբիլային ճանապարհների օրենքը, անհասկանալի տրամաբանությամբ, «մոռացել» եւ որեւէ կետով չի նշել նախագծերի ընտրությունը եւս մրցութակարգով անցկացնելու անհրաժեշտությունը: Այս դրդապատճառը եւ թերեւս ամենաորոշիչը պետական մտածողության բացակայությունն է, առանց գլխապավանքի փող աշխատելու մեր օրերի համար հատկանշական դարձած մտայնությունը: Բայց ինչո՞ւ եւ ինչպե՞ս են նման «մասնագետները» հայտնվում ոչ միայն աշխատանքային բարձր որակ, այլեւ (ինչպես վկայում է օրինակը) բարոյական բարձր պատասխանատվություն պահանջող աշխատատեղերում:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Միջազգային

Էվիանում գլխավորը տնտեսական զարգացման եւ հակասահաբեկչական պայքարի հարցերն են

100 հազարանոց ցույց Շվեյցարիայում

Էվիանում (Ֆրանսիա) անցկացվող «Մեծ ութնյակի» գագաթաժողովը հունիսի 1-ին բացվեց արդյունաբերապես զարգացած 8 երկրների (ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ռուսաստան), Եվրամիության, Շվեյցարիայի, ինչպես նաեւ հրավիրյալ 11 այլ երկրների (Եգիպտոս, Ալժիր, Նիգերիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Սենեգալ, Մեխիկա, Բրազիլիա, Չինաստան, Սաուդյան Արաբիա, Մալայզիա, Հնդկաստան) ղեկավարների մասնակցությամբ:

Ֆրանսպրեսը նշում է, որ վերջին 11 երկրների ղեկավարները հրավիրվել են Ֆրանսիայի նախաձեռնությամբ: Էվիան է ժամանել նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը, որն իր ելույթում հարուստ երկրներին հորդորեց ավելացնել նոր զարգացող երկրներին հատկացվող օգնության ծավալները:

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը եվրոպացիներին կոչ արեց չեղյալ հայտարարել ծագումնաբանորեն փոխկերպված օրգանիզմների ու բույսերի վրա սահմանված արգելքը, որպեսզի աֆրիկյան աղքատ երկրները բավարար չափով սնունդ ունենան:

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը, ըստ Ֆրանսպրեսի, ջանում էր գոնե ձեւականորեն հաշտվել Բուշի հետ եւ չխորացնել Իրաքի պատճառով ծագած տարաձայնությունները, որպեսզի չվնասի համաժողովի բնականոն ընթացքը: Ուստի Շիրակը ներկաներին առաջարկեց ուշադրությունը բեւեռել «վաղվա աշխարհակարգի» վրա եւ անտեսել վերջին ամիսների վեճերը:

Ինչ վերաբերում է երեկվա օրակարգին, առավոտյան «Մեծ ութնյակի» երկրները ննջարկել են համաշխարհային տնտեսության, ահաբեկչության, զանգվածային բնաջնջման զենքի տարածում թույլ չտալու հարցերը եւ մի շարք տարածաշրջանային հարցեր: Խոսվել է զարգացած երկրներում սկսվող տնտեսական լճացման, Իրաքի, Մերձավոր Արեւելքի, ԿԺԴՀ-ի, Իրանի մասին:

Նախագահներ Ժակ Շիրակը եւ Ջորջ Բուշն առանձին հանդիպել եւ զրուցել են: Դա նրանց առաջին հանդիպումն էր իրաքյան ճգնաժամի ծագումից ի վեր:

Հեսմիջօրեի հանդիպման ընթացքում արծարծվել է մասնավորապես աղքատ երկրների բնակչությանը պարենով, խմելու ջրով եւ էժան դեղորայքով ապահովելու խնդիրը: Խոսվել է նաեւ զարգացումը ֆինանսավորելու մասին: Սակայն Ջորջ Բուշը ներկա չէր այդ հանդիպմանը, քանի որ նախաճաշից հետո մեկնել էր Եգիպտոս: Այնտեղ Շարմ էլ Շեյխ քաղաքում այսօր անցկացվում է Մերձավոր Արեւելքին նվիրված գագաթաժողով:

Ըստ Ֆրանսպրեսի, այսօր հրապարակվելու է համատեղ հայտարարություն եւ անցկացվելու են «Մեծ ութնյակի» երկրների ղեկավարների մամլո ասուլիսներ:

Միաժամանակ հաղորդվում է, որ հակագլոբալիստները բողոքի զանգվածային ցույցեր են արել Էվիանում եւ Շվեյցարիայում: Կազմակերպիչների տվյալներով, Շվեյցարիայում ցույցերին մասնակցել է 100 հազար մարդ:

Լույս երկուշաբթի գիշերը արմատական ցուցարարներն անկարգություններ են հրահրել: Անանվա գործակալության տվյալներով, ժնեւի կենտրոնում 9 ժամ բախումներ են եղել ցուցարարների եւ ոստիկանների միջեւ, որոնք գործի են դրել ռետինե գնդակներ, արտասվաբեր գազ եւ ջրանետներ: Լոզանում ձերբակալվել է 400 ցուցարար:

Պ. ՔԵՇԻՇՅԱՆ

Իրաքում 6 շաբաթում կազմվելու է ժամանակավոր կառավարություն

Իրաքի ամերիկյան վարչակազմը հայտարարել է, որ առաջիկա 6 շաբաթների ընթացքում կազմվելու է քաղաքական խորհրդին ենթակա ժամանակավոր վարչակազմ, որը գործելու է որպես սաղմնային կառավարություն:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ միաժամանակ Վաշինգտոնում եւ Լոնդոնում շարունակվում են վիճաբանություններն Իրաքում իր եղած զանգվածային բնաջնջման զենքի առնչությամբ, որն ամերիկացի եւ բրիտանացի ղեկավարները պատրվակ էին դարձրել պատերազմն արդարացնելու համար:

Քաղաքական խորհուրդը կազմվելու է իրաքցիների տարբեր խմբավորումների ընդլայնված խորհրդակցություններից հետո: Ավելի վաղ ամերիկացիները նախատեսել էին իրաքյան ժամանակավոր կառավարություն կազմել իրաքցիների ազգային համագումարում, բայց այդ գաղափարից ի վերջո հրաժարվեցին էթնիկական, ցեղային ու կրոնական տարաձայնությունների պատճառով:

Ըստ Ֆրանսպրեսի, քաղաքական խորհուրդը կունենա 25-30 իրաքցի անդամ: Անգլո-ամերիկյան կոալիցիոն ուժերի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը նշել է, որ խորհուրդը տնտեսական եւ քաղաքական բնագավառներում խորհրդակցելու է օկուպացիոն վարչակազմի հետ:

Բացի դրանից, նոր մարմինը կնշանակի տարբեր նախարարությունների խորհրդականներ, որոնք հետագայում կունենան ժամանակավոր նախարարի կարգավիճակ:

Քաղաքական խորհուրդը նաեւ պետք է նախապատրաստի նոր սահմանադրությանն առնչվող հանրաքվեի անցկացումը:

«Խորհուրդն Իրաքի ժողովրդի ներկայացուցիչ է լինելու կոալիցիոն ժամանակավոր իշխանությունների հետ գոյություն ունեցող հարաբերություններում», ընդգծել է ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը:

ԱՄՆ-ը բացառում է միջուկային բնագավառում Իրանի հետ համագործակցելու հնարավորությունը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 ՀՈՒՆԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Միացյալ Նահանգներն առաջվա պես բացառում է միջուկային բնագավառում Իրանի հետ համագործակցելու հնարավորությունը, քանի որ զգուշանում է, որ նա ձգտում է զանգվածային բնաջնջման զենք ստանալ: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Բրուս Սամերսը՝ մեկնաբանելով ՌԴ ատոմային էներգիայի նախարար Ալեքսանդր Ռումյանցեւի արած հայտարարությունները: Մոսկվայում ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում նա հայտնել էր, որ ռուսաստանցի մասնագետները քանիցս ամերիկացի գործընկերներին առաջարկել են միանալ Բուշերում ատոմակայանի կառուցմանը: Այդ նախագիծը, որը Ռուսաստանը շարունակում է իրականացնել Իրանում, առեւտրային բնույթ է կրում եւ բացառապես խաղաղ ուղղվածություն ունի:

Սակայն Վաշինգտոնում գտնում են, որ իրանական միջուկային ծրագիրն ունի նաեւ ռազմական բաղադրիչ, ինչի մասին է վկայում Նաթանզում ուրանի հարստացման ձեռնարկության եւ Արաքում ծանր ջրի արտադրության գործարանի կառուցումը: Ուստի, հայտարարել է Սամերսը, ԱՄՆ-ը կոչ է անում մյուս երկրներին՝ հրաժարվել միջուկային բնագավառում Իրանի հետ փոխգործակցությունից առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ նա իր միջուկային օբյեկտները չի դնի ՄԱԳԱՏԷ-ի հսկողության ներքո եւ «չի փարատի միջազգային հանրակցության անհանգստությունը»: Դրա համար, հիշեցրել է ամերիկացի դիվանագետը, Թեհրանը, մասնավորապես, պետք է ստորագրի ՄԱԳԱՏԷ-ի հետ երաշխիքների մասին համաձայնագրի լրացուցիչ արձանագրություն, որը թույլ կտա ընդլայնել տեսչական ստուգումները նրա տարածքում:

Իրանին նման քայլեր ձեռնարկելու խորհուրդ է տալիս նաեւ ռուսաստանյան կողմը: Բայց նույնիսկ եթե նա հետեւի այդ կոչերին, նրա հետ միջուկային ոլորտում համագործակցությունը, միեւնույն է, փակ գոտի կմնա ԱՄՆ-ի համար: Ամերիկյան կառավարական գերատեսչություններին եւ մասնավոր ընկերություններին այդ թույլ չեն տալիս անել ազգային օրենքները, այդ թվում՝ «Իրանի նկատմամբ չտարածման մասին ակտը»: Բացի այդ, մի շարք նախագահական հրամանագրեր արգելում են նրանց ռազմավարական տեխնոլոգիաներ հանձնել «ահաբեկչությունը պաշտպանող պետություններին», որոնց ցուցակի մեջ ԱՄՆ-ն մտցրել է նաեւ Իրանին: Անցյալ տարի նախագահ Ջորջ Բուշն այդ երկիրը, Իրաքի եւ ԿԺԴՀ-ի հետ միասին, դասել է «չարիքի առանցքին» եւ, որքան հայտնի է, առայժմ չի փոխել նրա մասին իր կարծիքը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 2-րդ նախագիծը նույնպես մտահոգիչ է

Անցյալ շաբաթվա ընթացքում Եվրամիության հատուկ հանձնախմբի առաջարկած համընդհանուր սահմանադրության 2-րդ նախագիծը նույնպես բուռն քննադատությունների արժանացավ հատկապես համեմատաբար փոքր երկրների կողմից, որոնք իրենց հեղինակությունների թուլացում են զգում այդ օրենքների ենթատեքստում, գրում է Բարրի Ջեյմսը «Ինտերնեշնլ հերալդ տրիբյուն» թերթում:

Շատ երկրներ սահմանադրության ներառած դաշնության գաղափարին թերահավատությամբ են մոտենում, գտնելով, որ առաջարկված օրենքներով իշխանության առավել ամուր լծակներ են տրվում մեծ պետություններին: Մյուս կողմից, մեծ պետություններից էլ Անգլիան ունի իր դժգոհությունները, հատկապես գործադիր պաշտոնների հնարավոր կրկնությունների վերաբերյալ: Ներկայիս եվրահանձնաժողովն արտաքին հարաբերությունների պատասխանատու ունի՝ հանձին Քրիս Պատենի, որն անընդհատ սուր պայքարի մեջ է եվրամիության արտաքին ու անվտանգության հարցերի բարձրագույն ներկայացուցիչ Խավիեր Սոլանայի հետ:

Այժմ նոր սահմանադրության հեղինակները ցանկանում են ստեղծել եվրամիության արտգործնախարարի մի պաշտոն, որն իր ձեռքում կպահի Պատենի բյուջեն եւ Սոլանայի դիվանագիտական դերը: Բրիտանիան կտրուկ դեմ է նման պաշտոնի ստեղծմանը:

Ֆրանսիայի նախկին նախագահ Ժիսկար դ'Էստենի ներկայացրած նախագծի այս եւ այլ դրույթների թունդ քննադատների թվին է պատկանում եվրախորհրդարանի գերմանացի պահպանողական անդամ Էլմար Բրուկը, համաձայն որի ներկա դրությամբ սահմանադրությունը չի արտահայտում մեծամասնության շահերը: «Եթե մենք ընդունենք, որ 6 գլխավոր պետությունները թելադրեն իրենց կամքը մյուսներին, ապա մենք վերջ կտանք եվրամիություն հասկացությանը», ասել է նա:

Փոքր երկրներին մտահոգում է եվրամիության մեկ մշտական նախագահ ունենալու հանգամանքը: Ներկայումս, ինչպես հայտնի է, նախագահությունը 6 ամիսը մեկ փոխնիփոխ սանձնում են անդամ երկրները, եւ շատ անգամ, ինչպես փորձը ցույց է տվել, Լյուքսեմբուրգի նման փոքր պետությունները, չունենալով քաղաքական մեծ փառասիրություններ, շատ ավելի արդյունավետ են կարողանում ղեկավարել, քան մեծ պետությունները: Նրանք ցանկանում են իրերի ներկա դրությունը պահպանել եւ առիթ ունենալ իրենց խոսքն ասելու:

Կան նաեւ այլ տարակարծություններ 105 հոգուց կազմված «Եվրոպայի ապագայի համագումարի» առաջարկած սահմանադրության տարբերակի շուրջ, որը հունիսին քննարկման է դրվելու Հունաստանում կայանալիք գագաթաժողովի, իսկ ավելի ուշ՝ անդամ երկրների կոնֆերանսի օրերին:

Սպասվում է, որ տարակարծությունները հարթվեն եւ բանաձեւն ընդունվի ու վավերացվի նախքան առաջիկա տարում 10 նոր երկրներ միանան եվրամիությանը՝ դարձնելով այն հզոր տնտեսական եւ առեւտրական մի կառույց՝ մոտ կես միլիարդ ազգաբնակչությամբ:

«Շարունակելու ենք պայքարը միացյալ Կիպրոսի համար»

Հայտարարել է կիպրացի թուրք խմբագիրը

«Ներկայումս Կիպրոսի Հանրապետությունը միայն հունական կողմով է ներկայացված, բայց դա նման է մի թեւանի թռչունի, որը չի կարող թռչել», ասել է Շեներ Լեւենտը՝ 55-ամյա կիպրացի թուրք բանաստեղծը, որը թողած մուսաների աշխարհը, հրատարակում է Կիպրոսի հյուսիսային զավթված մասի գլխավոր ընդդիմադիր թերթը՝ «Աֆրիկան», եւ ամենօրյա այցելություններ կատարում դատարանները:

«Երեւի ավելի քան 100 գործ են հարուցել իմ դեմ», նշել է նա «Ինտերնեշնլ հերալդ տրիբյուն» թերթի թղթակցին: Պատահել է, որ նրան ձերբակալել են մի դատարանից դուրս գալուց, պատճառաբանելով, որ նա ներկա չի եղել նույն ժամում մեկ ուրիշ դատարանում իր դեմ բացված դատավարությանը: Նրան եւ թերթի քաղաքական մեկնաբան Մեմդու Էներին անցյալ տարի 6 ամսով բանտարկել են Դենիզբանկի քաղաքական ուղու մասին հոդվածներ գրելու մեղադրանքով: Դրանից առաջ 2001 թվին ռմբակոծել են խմբագրությունը եւ առգրավել համակարգիչները: Ապա իր հարկերը վճարած չլինելու պատճառով, կանխիկ փողերն ու կահույքն են հափշտակել: Նույնիսկ անձնագիրն են ձեռից խլել:

«Մենք բռնատիրության տակ ենք ապրում: Եթե լուռ մնաս, չնշես, որ Թուրքիայի զավթողական քաղաքակրթության տակ կիրում ես, կարող ես գուցե ապրել, բայց մենք չենք ցանկանում թուրքական օրենքներով ապրել: Մենք ժողովրդավարություն ենք ցանկանում, եվրոպական օրենքներ եւ մարդու իրավունքների պաշտպանություն», բացատրել է նա, ավելացնելով, որ թերթը 1997-ին էր հիմնադրել «Ավրուպա» անունով՝ նկատի ունենալով դեպի Եվրոպա եւ Եվրամիություն անցումը կղզու հունական մասի հետ, սակայն ստիպված էր փակել հսկայական հարկերի հետեւանքով: «Այնուհետեւ վերահրատարակեցինք թերթը «Աֆրիկա» անունով՝ ցույց տալու, որ դեռեւս ապրում ենք ջունգլիների օրենքներով», ասել է նա, թերթի թղթակցի ուշադրությանը հանձնելով այն, որ կղզու երկու մասերի բուֆերային գոտին բացելը Դենիզբանկի կողմից պարզապես Թուրքիայի իմիջը բարելավելու միջոց է այն բանից հետո, երբ ՄԱԿ-ի փորձերի ձախողման հետեւանքով այն խիստ վատթարացել էր: «Ես շարունակելու եմ պայքարը միացյալ Կիպրոսի համար», եզրակացրել է նա:

Նրան պաշտպանում է «Պոլիթիս» անկախ հունական թերթի խմբագիր Անդրեաս Պարասչոսը, որը նրան խիզախ ու լայնախոհ անձնավորություն է համարում: «Նա կարող է քննադատել ինչպես թուրքական, այնպես էլ հունական կողմի սխալները», նշել է նա:

Տ. Ս.

Սկսվել է Բալիի ահաբեկչության կազմակերպչի դատավարությունը

Ինդոնեզիայի Բալի կղզու մայրաքաղաք Դենպասարում երեկ սկսվել է հայտնի ահաբեկիչ Աբդուլ Ազիզի դատավարությունը, որն առավել հայտնի է Իմամ Սամուդրա անունով: Նա ամբաստանվում է 2002 թ. հոկտեմբերի 12-ին Բալիում ահաբեկչություն կազմակերպելու մեջ: Այդ օրը պայթյուններից զոհվել էին 202 անձիք՝ աշխարհի 21 երկրների քաղաքացիներ: 33-ամյա համակարգչագետ Իմամ Սամուդրան համարվում է «Ջեմաա իսլամիա» ընդհատակյա ահաբեկչական կազմակերպության առաջնորդներից մեկը: Մեղադրական ակտում նշվում է, որ նա ոչ միայն կազմակերպել է հիշյալ պայթեցումները, այլեւ ղեկավարել է Ճավա կղզու ահաբեկչական խմբերից մեկի գործունեությունը: Այդ խումբը, որի անդամներից չորսը դատվում են Սամուդրայի հետ մեկտեղ, 2002 թ. գարնանը Սերանգ քաղաքում ոստիկանական խանութ էր կողոպտել: Կողոպուտի գումարով, ըստ ՌԻԱ գործակալության, ֆինանսավորվել էր Բալիի ահաբեկչությունը: Սամուդրան նաեւ ամբաստանվում է 2000 թվականից մինչեւ օրս Ինդոնեզիայի տարբեր շրջաններում մի շարք պայթյուններ կազմակերպելու մեջ:

Պ. Ք.

Մշակույթ

Ծաղիկներ՝ սիրո երգչի գերեզմանին

Նինո Ափցիաուրի. «Սայաթ Նովայի սիրով սիրեցեք միմյանց»

Թիֆլիսահայությունը, հայ եւ վրացի մշակույթի գործիչներ, հասարակական, քաղաքական դեմքեր, ազգական այրեր կիրակի օրը՝ հունիսի 1-ին Թբիլիսիի սուրբ Գեւորգ հայ առաքելական եկեղեցու գավիթում ծաղիկներ դրեցին սիրո երգիչ, աշուղ Սայաթ Նովայի գերեզմանին:

Սայաթ-Նովյան ավանդական Վարդատոնի միջոցառումն այս տարի կազմակերպել էին Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմը՝ առաջնորդ Վազգեն վարդապետ Սիրզախանյանի օրհնությամբ, Վրաստանի հայերի միությունը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը:

«Այս տոնը կոչվել է Վարդատոն, քանի որ մեր Սայաթ Նովան եղել է վարդերի ու սիրո երգիչ: Վարդատոնն առաջին անգամ նշվել է 1914 թ. մայիսին նկարիչ, գրող Գեւորգ Բաշինջաղյանի ղեկավարությամբ», ասաց թիֆլիսահայության ավագ ներկայացուցիչներից նկարիչ, մանկավարժ Խաչատուր Գեւորգյանը:

Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը 1914 թ. գարնանը Սայաթ Նովայի հիշատակին նվիրված անդրանիկ արարողության իր ելույթում ասում է, որ «այսուհետ ավանդաբար պետք է նշենք «Վարդատոնը»:

Սակայն հետեւում են Առաջին աշխարհամարտը, հայերի կոտորածներն Արեւմտյան Հայաստանում, ապա երկրագնդի մեկ վեցերորդ մասի խորհրդայնացումը, Երկրորդ աշխարհամարտը, եւ Վարդատոնի գեղեցիկ ավանդույթը սուրբ Գեւորգ եկեղեցու գավիթում շարունակվում է 1962 թվականից՝ թիֆլիսահայ գրողների, մշակույթի գործիչների նախաձեռնությամբ:

Սայաթ Նովայի գերեզմանը սուրբ Գեւորգ եկեղեցու հյուսիսային պատի հարեւանությամբ է գտնվում: Եկեղեցու բակում են թաղված գեղանկարիչ Գեւորգ Բաշինջաղյանը, հայ նշանավոր զորավարներ Լոռիս-Մելիքովը, Տեր-Ղուկասովը, Լազարյանցը, Շելկովնիկյանցը:

«Սայաթ Նովայի սիրով սիրեցեք միմյանց», Վարդատոնին ասաց Թբիլիսիի Սուլիան-Սաբա Օրբելիանու անվան պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի ու գրականության ամբիոնի վարիչ, հայագետ Նիո Ափցիաուրին:

Վարդատոնի միջոցառմանը ելույթներ ունեցան հայ գրողներ, բանաստեղծներ Կարինե Խոդիկյանը, Համլետ Կարճիկյանը, Լիպարիտ Սարգսյանը, «Վերնատան» նախագահ Ժորա Սնխչյանը, «Վրաստանի հայերի միության» ղեկավար Հենրիխ Սուրադյանը, Հայաստանում բնակվող վրացիների «Իվերիա» միության նախագահ Թինաթին Ասաթիանին, Քվեմո Քարթլի նահանգում նախագահ էդ. Շեւարդնաձեի լիազոր ներկայացուցիչ Լեւան Մամալաձեն ու էլի շատ ու շատ ուրիշներ:

Սայաթ Նովայի վրացերենով տաղերը եւ սիրո երգչին նվիրված բանաստեղծությունները ասմունքեցին Գիորգի Քավթարաձեն, Գենո Գալադիան, Գիա Զուրաբաշվիլին, Սայաթ Նովայի թարգմանիչ Գիվի Շահնազարովը: Ելույթի հնարավորություն տրվեց նաեւ Վրաստանում բնակվող ադրբեջանցիների ներկայացուցչին:

Վարդատոնին ելույթ ունեցողները կրկնում էին, որ Սայաթ Նովան հայ եւ վրացի, ինչպես նաեւ ադրբեջանցի ժողովրդի սիրո երգիչն է, գրել է ու երգել հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն:

«Սայաթ Նովան մերն է, բոլորինս», ասաց ժողովրդական դերասան Ազատ Գասպարյանը:

«Այսօր սիրո օր է: Սերը լեզու չի ճանաչում: Այս գեղեցիկ ավանդույթն այնքան կշարունակվի, քանի դեռ աշխարհի վրա կա սեր», ասաց Կարինե Խոդիկյանը:

«Չկա թեզ նման», «Քո քյամանչով գալու ես դեռ, Սայաթ Նովա»՝ այս բառերով կարելի է ընդհանրացնել Վարդատոնին ելույթ ունեցողների խոսքը:

«Հայ-վրացական հարաբերություններում կան լուսավոր կետեր», մեր զրույցում ասաց Թբիլիսիում հավատարմագրված մի դիվանագետ: «Պարզապես դրանք տեսնելու ցանկություն է պետք»:

Սայաթ Նովայի Վարդատոնը մի լուսավոր օր էր հայ-վրացական հարաբերություններում:

ԹԱԹՈՒԼ ՎԱՐՈՒՔՅԱՆ
Թբիլիսի

Ավազի վրա կառուցված փառքեր

Սամվել Կարապետյանի «Թիֆլիսի քաղաքագլուխները» գիրքը

Որքան էլ ասենք, որ մեզանում այսօր գիտությունը եւ մշակույթը ընտանիքի ավելորդի կարգավիճակում են, այնուամենայնիվ, գտնվում են մարդիկ (իսկապես՝ նվիրյալներ), ովքեր, թեեւ դժվարությամբ, բայց անչափ կարեւոր գործ են կատարում: Այդ մարդկանցից է Սամվել Կարապետյանը, որը իսկական աշխատանք է կատարել հայ մշակույթը աշխարհին ներկայացնելու համար: Նրա նախաձեռնությամբ ու ջանքերով 1998 թ. Հայաստանում հիմնվել է Հայկական ճարտարապետության ուսումնասիրող կազմակերպության (RAA) հայաստանյան գրասենյակը, որի ղեկավարն էլ ինքն է: Գրասենյակի նոտատակը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, մասնավորապես՝ պատմական Հայաստանի տարածքում (առաջնահերթորեն), ապա նաեւ սփյուռքում պահպանված պատմական հուշարձանների բազմակողմանի ուսումնասիրություններն են: 1997-ից սկսած կազմակերպությունը «RAA Գիտական ուսումնասիրություններ» շարքով լույս է ընծայել «Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը» (1997 թ., հայերենով), «Վրաց պետական քաղաքականությունը եւ հայ մշակույթի հուշարձանները» (1998 թ., հայերենով), «Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» (1998-2001 թթ., հայերենով, ռուսերենով, անգլերենով) նաեւ «Արցախի եւ Սյունիքի մելիքական արարանները» (2001 թ. հայերենով, որն ունի նաեւ ընդարձակ ամփոփումներ նաեւ ռուսերենով ու անգլերենով): Եվ, ահա, լույս է տեսել այս շարքի հինգերորդ աշխատությունը՝ «Թիֆլիսի քաղաքագլուխները»: Գրքի տպագրությունը հովանավորել են Ռազմիկ եւ Վիոլետ Թադեւոսյանները:

Տպագրված եւ ընթերցող աղայող բազմահազար գրքերի մեջ այս կարեւոր աշխատության տպագրությունը ոչ միայն պատիվ է բերում հեղինակին՝ Սամվել Կարապետյանին, այլեւ հովանավորներին, որոնք իսկապես հայանվեր կեցվածք ունեն եւ արժանի են մեծ գովեստի:

Որեւէ քաղաքի զարգացումը միշտ էլ պայմանավորված է եղել քաղաքագլխի անձով: Անշուշտ, քաղաքագլուխը պատասխանատու, շատ դեպքերում քաղաքական գործիչ է: Բայց շատ քաղաքներ քաղաքաշինական խնդիրների իրենց մշածված, հաճախ ինքնատիպ ու յուրահատուկ լուծումներով, աչք շոյող արտաքինով նախ եւ առաջ ու մասնավորապես պարտական են իրենց քաղաքագլուխներին: Այդպիսին է եղել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի պարագայում, որը դեռեւս 19-րդ դարի վերջերին հիշատակվում է որպես «Կովկասի Փարիզ»:

Թբիլիսին շատ ու շատ հայեցի քաղաք է եղել: «Հայը խլեց Թիֆլիսը ո՛չ վրացուց, այլ պարսից, թուրքից եւ գերմանացոց ձեռքն եւ այդ՝ ոչ թե անօրենությամբ, նենգ հնարներով ու մռայլ գիշերուայ ժամանակ, ո՛չ, ո՛չ, այլ արդար վաստակով, արդար փողերով, արքուն խելքով ու պայծառ օրուայ միջոցին»: «Կովկասի մայրաքաղաքի» բոլոր ոլորտներում գերակշռություն ունեցող հայերը, պարզ է, պետք է նաեւ վարեին քաղաքի իշխանությունները: Անվանի ու մեծահարուստ 79 հայկական տներ՝ ազգատոհմերը առանձնակի մեծաշնորհներ են ունեցել: Ու այս 79-ից 14-ի ներկայացուցիչները տարբեր ժամանակներում (12-րդ դարից մինչեւ 1917 թվականը) եղել են Թիֆլիսի քաղաքագլուխներ: Ընդհանուր հաշվարկով նշված ժամկետում Թբիլիսիի քաղաքագլուխ (սկզբնական շրջանում դրանք կոչվել են շահաք, ամիրա, մելիք, մելիք-տանուտեր, մամասախլիս) եղել է 47 մարդ, որոնցից 45-ը եղել են հայեր:

Դեռեւս 1802 թ. մայիսի 21-ին գեներալ Կնորինգին հղած մի գրության մեջ Բեհբուդյան տոհմի շառավիղ, Տփխիսի քաղաքապետ (նա ղեկավարել է քաղաքը 1795-1801 թթ.) մելիք Դարչի Ավետիքյան Բեհբուդյանցը բացատրել է հայերի ֆենոմենը. «300 տարի է, ինչ հայ ժողովրդի պետականության դադարեցումից հետո մեր նախնիները գաղթել են Թիֆլիս: Այդ ժամանակներից մինչեւ այժմ տարբեր իշխանությունների օրոք մենք մշտապես հարգանք ենք վայելել. 1714 թ.-ից հետո վրաց թագավորները մեր նախնիներին հաստատել են որպես մելիք, մամասախլիս եւ նացվալ. տարբեր ժամանակներում, երբ Վրաստանը ենթարկվել էր Թուրքիայի եւ Պարսկաստանի բռնատիրությանը, նրանք ոչ միայն չէին զրկվել պատիվներից եւ կոչումներից, այլեւ իրենց աշխատանքի, հերոսության եւ ջանասեր ծառայության համար տիրապետողներից հաստատվել էին իրենց դիրքերում, ինչպես վկայում են թուրքական սուլթանի, պարսից շահերի եւ վրաց թագավորների հրովարտակները»:

Սամվել Կարապետյանը սպառիչ տեղեկություններ է հաղորդում բոլոր 45 հայ քաղաքագլուխների մասին, որոնք ներկայացնում էին հայկական 14 ազգատոհմերը՝ Աբիսողոմովներ, մեկ ուրիշ Աբիսողոմովներ, Եվանգուլով, Իգանադինով, Իզմիրով, Մանանով, Մատինով, մելիք Զուրաբով, մելիք Սահակով, մելիք Շերմազանով, Միրիմանով, Փրիդոնով, Սարաջեւ, Խաչիով:

Աշխատության մեջ պատմական լուրջ ուսումնասիրության է ենթարկված Թիֆլիսի պատմությունն ընդհանրապես: Կարդալով «Թիֆլիսի քաղաքագլուխները» գիրքը՝ ստույգ տեղեկություններ ենք ստանում քաղաքի բնակչության կազմի, նիստուկացի, սովորությունների, համարությունների, ազգային փոխհարաբերությունների, այսինքն՝ Թիֆլիսի մասին ընդհանրապես:

Պահպանված պաշտոնական փաստաթղթերը վկայում են, որ մինչեւ 1926 թվականը Թիֆլիսի բնակչության գերակշիռ մասը կազմել են հայերը: Այսպես, Թիֆլիսում 1848 թվականին ապրել է 14.194 հայ (ողջ բնակչության 46,1 տոկոսը), 1864 թվականին՝ 28.404 հայ (47,3 տոկոս): Նշենք, որ այս ժամանակ քաղաքում հաշվվում էր 14.878 վրացի (24.8 տոկոս), 12.462 ռուս (20,7 տոկոս), մյուս ազգի ներկայացուցիչների թիվը հասնում է ընդամենը 4341-ի (7,2 տոկոս): Այս համամասնությունը փոքր-ինչ, աննշան փոփոխություններով պահպանվել է մինչեւ 1926 թվականը: Եվ միայն հետո է ավելացել վրացի թիֆլիսաբնակների թիվը: 1979 թվականին արդեն քաղաքում ապրում էր 153 հազար հայ (բնակչության թվի 14 տոկոսը), 653 հազար վրացի (62 տոկոս) եւ 129 հազար ռուս (12 տոկոս):

Այսօր անչափ հետաքրքրական իրավիճակ է: Շուրջ 800 տարվա ընթացքում Թիֆլիսի պաշտոնավարած 47 քաղաքագլուխների գերեզմաններից պահպանվել են միայն երկուսինը՝ Դ. Դիփիանու եւ Վ. Շերեզովի (այս երկուսը ազգությամբ վրացի են): Մինչ մնացած բոլոր քաղաքագլուխների (որոնք հայ են եղել) գերեզմաններից ոչ մեկը չի պահպանվել:

«Այո, ինչը որ չես կառուցել հայրենիքումդ, կառուցել ես ավազի վրա», ցավով եզրակացնում է Սամվել Կարապետյանը:

ՄԵՐԳԵՑ ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»-1000

Եկա մեկ ազատում շղթաներից

«...Նախնականության բաղձանք մը՝ երկյուղով մակարդված, առհավության հեռալուր ձայն մը՝ կարծես արհավրոտ ձայնին ընդխառնված՝ հետո անկե տարանջատ՝ կկոթողվի մեկեն հոգիիս մեջ: Ու բոլոր ուրվագիրներուն ու պատկերներուն մեջեն, որոնք անոր

շրջանը կ'ընեն հիմակ, բոցով շրջանակված դիմագիծ մը, հայեցողի միսիք, մշուշոտ, աղոթավոր կենդանագիր մը կ'որոշագծվի հոն մինչեւ ճակատին ակոսները՝ զորս Մեղրի գաղափարին արորն է քաշած. մինչեւ աղեւսարկու աչքերուն թախծոտ նայվածքը՝ ասվածյան հուրով մը տոգորված ու մինչեւ շուրթերուն աղոթկեր երեւումն ալ: Նարեկացին է...»:

Այս տողերը պիտի հիշենք Մուղնիի Սուրբ Սարգիս եկեղեցում շաբաթ օրով «Նարեկյան օրին» ներկա լինելով, հոգեւոր շայլության մի օր, որը կազմակերպել էր «Երկիր եւ մշակույթ» միությունը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ:

– Արդեն հազար տարի ի վեր մենք մեր սեղանին ու մեր հոգիներում ունենք մի սուրբ գիրք, որը մեզ միշտ կփրկե ամեն տեսակ հիվանդություններից ու երկրավոր աղետներից, մեր միտքն ու հոգին կմաքրե ամեն տեսակ ախտերից:

Սուրբ Սարգիս եկեղեցու կամարների տակ, բազմաթիվ գրասեղանների ու հոգեւոր ծաղիկների երկրպագուների ներկայությամբ ասված խոսքերը շատ ավելի խորհրդավոր իմաստ էին ստանում: Ու հաստատեր էին հնչում անմահ «Մատեանից»՝ Սարգիս Նաջարյանի վարպետ կատարումով: Մեզ՝ հայերիս համար սուրբ գրքից ընտրված հատվածների արտասանությունն ուղեկցվում էր Լուսինե Դաղարյանի եւ Անահիտ Պաղյանի հոգեւոր երգերի կատարումներով:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգության» անմահ ստեղծագործության 1000-ամյակին նվիրված Մեսրոպ սրբազանի կազմակերպած այս միջոցառումը մեզ ավելի մոտեցրեց հոգեւոր հզոր մշածումներին, ու մենք երկրավոր շղթաներից մեկ անգամ եւս ազատվեցինք:

Ս. Գ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԴԱՐՈՒՓՈՍԻՑ

25. ...Ու կսիրենք իրար Դարուփոսում

Վերջապես Դարուփոսի 131 ընտրյալներն ընտրված են եւ, հույս ունենք, որ այսուհետեւ հանգիստ, խաղաղ, մարդավայել կապրենք, իրար չենք գգի, իրար չենք բգի, չար խոսք չենք ասի, չենք հայհոյի:

Վարժապետ Սերգոն Դարուփոսի ողջ հասարակությանը դիմեց հենց այս կոչով:

– Սիրելի դարուփոսցիներ, ազատասերներ, միասնականներ, դաշնակահարներ, վայրենավարներ, բոլոր-բոլորդ,- ասաց նա,- այսօրվանից բոլոր տեղերում էլ կան: Այդ ո՞ր փոսում է, որ թույլն ուժեղի մոտ չի ջղաձգվում ու չի բամբասում, անշնորհը շնորհալի մարդու մասին չի չարախոսում... Չկա, այդպիսի փոս չկա: Բայց խելամիտ փոսերն ապրում-հարատեւում-ծաղկում են, որովհետեւ իրենց լավի մասին շատ ավելի են խոսում, քան՝ վատի, ավելի շատ սիրում են, քան՝ ատում: Ահա, այս մասին էր ասում վարժապետ Սերգոն: Համոզված էր ասում, որովհետեւ Դարուփոսն, այսուամենայնիվ, աշխարհի ամենաչքնաղ վայրն է:

Այդ ո՞ր փոսում է ամեն տան լուսամուտից լեռը երեւում, որպես երազ, ցավ, կորուստ, երազանք, հմայք, որպիսին Դարուփոսում է: Այդ ո՞ր փոսում են իրենց երեխաներին իրենց պապի անունով կնքում, որպեսզի հիշողությունը չմեռնի: Այդ ո՞ր փոսում են ավելի շատ բանաստեղծություն գրում, քան թերթեր կարդում: Այդ ո՞ր փոսում են աղջիկներն այդքան գեղեցիկ եւ տղաներն այդքան ուժեղ: Այդ ո՞ր փոսում են այդքան անչար կատակում, որպիսին Դարուփոսում է: Այդ ո՞ր փոսում են իրար այդպես զգույշ ծեծում, որքան Դարուփոսում:

– Սիրելի դարուփոսցիներ,- ասաց վարժապետ Սերգոն,- մենք շարունակելու ենք ապրել: Եվ որպեսզի մեր ապրելը նաեւ հաճույք լինի, պարտավոր ենք իրար սիրել:

Այսպես ասաց վարժապետ Սերգոն, այսպես ասաց:

Դարուփոսի այս իրավիճակն էլ մեկնաբանեց

ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԱՆԸ
Վերջ առաջին հատորի

Երկուշաբթի շախմատի Եվրոպայի առաջնությունում իրենց մրցավեճն սկսեցին նաեւ գեղեցիկ սեռի 107 ներկայացուցիչներ՝ աշխարհի երեք տասնյակ երկրներից: Մասնակիցների մեջ են Հայաստանի կանանց հավաքականի բոլոր չորս անդամները՝ Լիլիթ Մկրտչյանը, Էլինա Դանիելյանը, Գոհար Հլղաթյանը, Լիլիթ Գալոյանը: Պայքարին մասնակցում են եւս երկու հայ շախմատիստուհիներ՝ Արցախի, Հայաստանի եւ Մոլդովայի բազմակի չեմպիոնուհի Նաիրա Աղաբաբյանը (նա այժմ բնակվում է Քիշնեւում) եւ նրա դուստր Էլմիրա Սկրիպչենկո-Աղաբաբյանը (Ֆրանսիա): Խաղարկվում է աշխարհի ա-

Ռեպորտաժ «Արմավիա» ընկերության աջակցությամբ

Հայաստանի դրոշն առաջինն է Ստամբուլի մրցաարահում

Գագիկ Հովհաննիսյանը հաղորդում է Ստամբուլից

ռաջնության 17 ուղեգիր: Մի քանի մասնակիցներ, այդ թվում՝ Եվրոպայի անցյալ տարվա երկրորդ մրցանակակիր Լիլիթ Մկրտչյանն արդեն նվաճել է այդ ուղեգիրը:

Երկու մրցաարահներում, որտեղ ընթանում են կանանց եւ տղամարդկանց մրցաշարերը, մեզ դիմավորում են մասնակից երկրների պետական դրոշները: Առաջինը ծածանվում է ՀՀ-ի եռագույնը, շնորհիվ նրա, որ լատինական այբուբենով մեր պետությունն է գլխավորում ցուցակը:

Կանանց մրցաադայքարում առաջինն իր խաղն ավարտեց Դանիելյանը որը հաղթեց հույն Պարադուպուլոյին: 4-րդ տուրում ոչ-ոքի են ավարտվել Արոնյան-Գուլիեւ, Ասրյան-Կուրնոսով զարտիաները: Լեւոնն ու Կարենը 4 հնարավորից ունեն 2,5-ական միավոր: Վահանյանը, Անասասյանը եւ Մովսիսյանը 3 հանդիպումներում վաստակել են 2-ական միավոր: Մինասյանը, Լազուտյանը, Սարգսյանն ունեն 1,5-ական միավոր: Նախորդ տուրերի հանդիպումներից նշենք Վահանյանի հաղթանակը Բանիկասի, Անասասյանինը՝ թուրք Դումանի, Արոնյանինը՝ դե Վյուտի, Ասրյանինը՝ Նիկոլաիդիսի, Մինասյանինը՝ Նիխոտի, Սարգսյանինը՝ Կուզրեյչիկի նկատմամբ: Վիճակահանության առումով Մինասյանի բախտը չբերեց. նա առաջին երկու տուրերում հանդիպեց ամենաբարձր վարկանիշ ունեցող շախմատիստներից երկուսի հետ: Ազմայփարաշվիլու հետ հաջողություն կնվաճելուց հետո Արտաշեսը մեծ առավելություն ստացավ Իվանչուկի նկատմամբ, բայց շատեց, վրիպեց եւ պարտվեց:

Շումախերը բավարարվեց 3-րդ տեղով

Կոլումբիացի խուան Պաբլո Մոնտոյայի հաղթանակով ավարտվեց «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության 7-րդ փուլը, որն անցկացվեց Մոնակոյում: Ավտոմրցավազքի վերջնական արդյունքների վրա մեծ ազդեցություն ունեցան որակավորման մրցումները: Միխայիլ Շումախերը, որը 5 անգամ հաղթող է ճանաչվել Մոնակոյում, ավտոմրցավազքը սկսեց հինգերորդը եւ ավարտեց միայն 3-րդը: 2-րդ տեղում ֆինն ավտոմրցարշավորդ Ռայկիոնենն էր, իսկ լավագույն արդյունքը ցույց տվեց Մոնտոյան, որն իր կենսագրությունում 2-րդ հաղթանակը տոնեց՝ արժանանալով Մոնակոյի «Մեծ մրցանակին»: Այս հաղթանակի շնորհիվ կոլումբիացի ավտոմրցարշավորդն ընդհանուր հաշվարկով տեղափոխվեց 5-րդ հորիզոնական: Իսկ առաջատարը Ռայկիոնենն է, որն ավելացրեց միավորների տարբերությունը Միխայիլ Շումախերից:

Ասիական ֆուտբոլի դափնեկիրները

Հոլանդական «Ֆեյենորդի» եւ Ճապոնիայի հավաքականի 23-ամյա կիսապաշտպան Սինձի Օնոն ճանաչվել է Ասիայի լավագույն ֆուտբոլիստ: Հարցման արդյունքներով նա գերազանցեց իր հայրենակից Ջյունիչի Ինամոտոյին, կորեացի հարձակվող Ան Չժուն Խվանին եւ չին կիսապաշտպան Լի Տեին: Օնոն դարձավ ճապոնացի 3-րդ ֆուտբոլիստը, որն արժանանում է նման պատվի: 1994 թ. սահմանած մրցանակը նվաճել են նաեւ Մասամի Իխարան (1995 թ.) եւ Հիդետոսի Նակատան (1997, 1998 թթ.): Հոլանդացի Գուս Հիդինկը, որի գլխավորությամբ Կորեայի հավաքականն աշխարհի առաջնությունում մտավ կիսաեզրափակիչ, ճանաչվել է Ասիայի լավագույն մարզիչ, իսկ կորեացիները՝ լավագույն թիմ:

Չեմպիոնի հավակնորդները միավորներ են կորցնում

Իսպանիայի առաջնությունում շարունակվում է չեմպիոնի կոչման համար մրցավազքը: 36-րդ տուրում ոսկե մեդալների հավակնորդները հերթական թանկարժեք միավորները կորցրին: Աղյուսակը 73 միավորով գլխավորող «Ռեալ Սոսյեդադը» սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) խաղաց «Վալենսիայի» հետ: 33-րդ րոպեին Ալոնսոն առաջ մղեց դաշտի տերերին, սակայն 2 րոպե անց Ռեվելի հարվածից հետո գնդակը դիպչելով պաշտպան Խաուրեգիի ոտքին, հայտնվեց «Ռեալ Սոսյեդադի» դարպասում: Առաջատարին մեկ միավորով զիջող Մադրիդի «Ռեալը» նույնպես ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը «Սելթայի» հետ: Հյուրերը թեեւ ողջ խաղում պաշտպանվում էին, սակայն առաջինը հասան հաջողության: 35-րդ րոպեին հաշիվը բացեց ռուս լեգեոներ Մոստովոյը: Ընդմիջումից հետո Ռաուլը հավասարեցրեց հաշիվը: Մինչ այդ մրցավարը Ռոնալդոյին վայր գցելու համար չէր նշանակել 11 մ հարված, հետո էլ չհավեցվեց վերջինիս խփած գոլը: Խաղավերջում «Ռեալը» գոլային 3 պահ չօգտագործեց: Եթե ամփոփիչ աղյուսակում «Ռեալն» ու «Ռեալ Սոսյեդադը» հավասար միավորներ վաստակեն, ապա անձնական հանդիպումների արդյունքով չեմպիոնի կոչումը 1982 թ. առաջին անգամ կնվաճի «Ռեալ Սոսյեդադը»:

Տեսականորեն չեմպիոնի տիտղոսին դեռեւս հավակնում է նաեւ «Դեպորտիվոն», որը դժվարին պայքարում 3-2 հաշվով հաղթեց «Աստեիկոյին»՝ վաստակելով 69 միավոր: Գոլերից մեկն իր հաշվին գրանցեց առաջնության լավագույն ռմբարկու Ռոյ Մակայը՝ խփելով 28-րդ գնդակը: 20 գոլ է խփել Նիխատը («Ռեալ Սոսյեդադ»), 19-ական գոլի հեղինակ են Կովաչեւիչը եւ Ռոնալդոն:

Տուրի մյուս հանդիպումներում գրանցվել են այսպիսի արդյունքներ. «Բարսելոն»- «Մալագա»՝ 2-1, «Վալյադոլիդ»-«Օսասունա»՝ 0-2, «Ալավես»-«Բետիս»՝ 0-1, «Մալյորկա»-«Ռայո Վալյեկանո»՝ 1-1, «Վիլյառեալ»-«Աստեիկ»՝ 1-1, «Սեւիլիա»-«Ռեկրեատիվո»՝ 1-0, «Ռասինգ»-«Էսպանյոլ»՝ 5-2:

«Էյնդհովենը» Հոլանդիայի չեմպիոն

«Էյնդհովենը» 17-րդ անգամ նվաճեց Հոլանդիայի չեմպիոնի տիտղոսը՝ մեկ միավորով գերազանցելով այժմ արդեն երկրի նախկին չեմպիոն «Այաքսին»: Ավարտական տուրում «Էյնդհովենին» անհրաժեշտ էր միայն մեկ միավոր վաստակել: «Գրոնինգենի» հետ խաղը «Էյնդհովենն» ավարտեց ոչ-ոքի (0–0) եւ հասավ իր նպատակին: Այսպիսով, Հոլանդիայից չեմպիոնների լիգայում հանդես գալու իրավունք նվաճեցին երկրի չեմպիոն «Էյնդհովենը», արծաթե եւ բրոնզե մրցանակակիրներ «Այաքսն» ու «Ֆեյենորդը»: Բարձրագույն խմբին հրաժեշտ կտա «Դե Գրաֆխպաղը», որին հաջորդ տարի կմիանա առաջին խմբի հաղթող «Դեն Խագը»:

«Միլանն» Իտալիայի գավաթակիր

Չեմպիոնների գավաթին տիրելուց մի քանի օր անց «Միլանը» դարձավ նաեւ Իտալիայի գավաթակիր: Միլանցիները մրցանակի համար գործնականում լուծել էին գավաթի եզրափակիչ առաջին խաղից հետո՝ 4-1 հաշվով հաղթելով «Ռոմային»: Բայց պատասխան խաղում «Միլանը» հայտնվեց ծանր կացության մեջ: Տնային խփած երկու գոլերի շնորհիվ «Ռոմա» հաղթում էր մրցակցին: Այնուամենայնիվ, «Միլանը» կարողացավ խույս տալ պարտությունից: Ռիվալդոն ու Ինզագին հավասարեցրին հաշիվը: Հարկ է նշել, որ 70-րդ րոպեին դաշտից հեռացվեց Կասանոն, իսկ խաղավարտից 4 րոպե առաջ «Ռոմա» մնաց 9 հոգով: Կարմիր քարտ ստացավ Տոտին: «Միլանը» դարձավ երկրի 5-ակի գավաթակիր:

Կամային հաղթանակ

Ֆրանսիայի գավաթի եզրափակիչ հանդիպումը «Պարի Սեն Ժերմենի» եւ «Օսերի» միջեւ դրամատիկ ավարտ ունեցավ: Հանդիպման ընթացքում զիջելով 0-1 հաշվով (21-րդ րոպեին Ուգո Լեալն առաջ էր մղել «Պարի Սեն Ժերմենին»), «Օսերը» կարողացավ կամային հաղթանակ տոնել: Խաղավարտից 14 րոպե առաջ Ջիբրիլ Սիսեն հավասարեցրեց հաշիվը, իսկ վերջին րոպեին Բուսմոնգը խփեց հաղթական գնդակը: «Օսերը» 3-րդ անգամ նվաճեց Ֆրանսիայի գավաթը եւ իրավունք ստացավ մասնակցելու ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաարահին:

ՖՈՒՏԲՈԼԻ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

«Շիրակը» ռեւանշի հասավ

Երեք հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի ՀՀ բարձրագույն խմբի առաջնության 6-րդ տուրը: Առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Գյումրիում կայացած «Շիրակ»- «Միկա» հանդիպումը: Մեկ շաբաթ առաջ գավաթի կիսաեզրափակիչի պատասխան խաղում «Միկան» սեփական հարկի տակ 3-0 հաշվով համոզիչ հաղթանակ էր տոնել: Եվ ահա Գյումրիում «Շիրակը» ռեւանշը վերցրեց շնորհիվ Արսյոմ Հակոբյանի եւ Արարատ Հարությունյանի խփած գոլերի:

Աբովյանում «Կոտայքը» 2 անպատասխան գնդակ խփեց առաջնության հետնապահ «Արաքսի» դարպասը: Գոլերի հեղինակը Արթուր Քոչարյանն էր, որն այդ օրը ՀՀ առաջնություններում անց էր կացնում հոբելյանական 200-րդ հանդիպումը: Արթուրն իր գոլերի թիվը հասցրեց 85-ի եւ ընդգրկվեց ՀՀ առաջնությունների լավագույն ռմբարկուների տասնյակում, որը գլխավորում է Արսեն Ավետիսյանը (150 գոլ):

Աշտարակում «Դինամոյի» հետ հանդիպմանը «Բանանցը» ներկայացավ Հովհաննես Զանազանյանի գլխավորությամբ, որը ստանձնել է թիմի գլխավոր մարզչի պաշտոնը: Արդեն 7-րդ րոպեին «Բանանցը» 11 մ հարվածի իրավունք ստացավ: Արա Հակոբյանի հարվածը հետ մղեց դարպասապահ Աֆրիկյանը, սակայն հարձակվողը երկրորդ հարվածով գնդակն ուղարկեց դարպասը: 10 րոպե անց Արամ Հակոբյանը կրկնապատկեց հաշիվը: Ընդմիջումից հետո թիմերը մեկական գնդակ փոխանակեցին: «Դինամոյից» աչքի ընկավ Գարիկ Սուքիասյանը, իսկ «Բանանցի» կազմում իր 2-րդ գոլը խփեց Արա Հակոբյանը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1.Շիրակ	6	5	0	1	10-3	15
2.Փյունիկ	6	4	2	0	19-2	14
3.Կոտայք	6	4	1	1	7-4	13
4.Բանանց	6	3	1	2	8-4	10
5.Միկա	6	3	0	3	10-7	9
6.Լեռնագ.	6	2	0	4	8-11	6
7.Դինամո	6	1	0	5	6-12	3
8.Արաքս	6	0	0	6	1-26	0

Ռմբարկուները

Արամ Ոսկանյան («Միկա»)	5
Արամ Հակոբյան («Բանանց»)	4
Արթուր Քոչարյան («Կոտայք»)	4
Լեւոն Փաչաջյան («Փյունիկ»)	3
Իսա Տրաորե («Փյունիկ»)	3
Հակոբ Մամուլյան («Լեռնագ.»)	3
Ալեն Մովսիսյան («Լեռնագ.»)	3
Կարեն Ալեքսանյան («Շիրակ»)	3
Արա Հակոբյան («Բանանց»)	3
Հրայր Միքայելյան («Դինամո»)	3

«Բավարիայի» կրկնակի հաջողությունը

Գերմանիայի չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո Մյունխենի «Բավարիան» նվաճեց նաեւ երկրի գավաթը՝ հասնելով կրկնակի հաջողության: Եզրափակիչում մյունխենցիները 3-1 հաշվով հաղթեցին «Կայզերսլաուտերնին»: Արդեն 3-րդ րոպեին Միխայիլ Բալակն առաջ մղեց «Բավարիային», իսկ 7 րոպե անց 11 մ հարվածով կրկնապատկեց հաշիվը: 2-րդ խաղակեսի սկզբին Բալակի փոխանցումով պերուացի հարձակվող Պիզարոն 3-րդ անգամ ստիպեց «Կայզերսլաուտերնին» խաղը վերսկսել դաշտի կենտրոնից: Խաղավերջում Միրսլավ Կլոզեն «թրջեց» հաշիվը:

Հաղթելով 3-1 հաշվով, «Բավարիան» 11-րդ անգամ նվաճեց Գերմանիայի գավաթը եւ 4-րդ անգամ մեկ մրցաշրջանում հասավ կրկնակի հաջողության:

ԲԿՄԱ-ն շարունակում է հաղթարշավը

Ֆուտբոլի Ռուսաստանի առաջնությունում իր հաղթարշավն է շարունակում ԲԿՄԱ-ն, որը 11-րդ տուրում Սամարայում 2-0 հաշվով հաղթեց «Կոիլյա Սովետովին»: Իսկ ահա երկրի չեմպիոն «Լոկոմոտիվն» ու բրոնզե մրցանակակիր «Սպարտակը» շարունակում են անկայուն ելույթները: «Սպարտակը» կազմում զիջեց «Ռուբինին» (0-1), իսկ «Լոկոմոտիվը» «Սատուրնի» հետ խաղն ավարտեց ոչ-ոքի (0-0): Փորձառու մարզիչ Վալենտին Իվանովի գլխավորությամբ իր մրցաշարային վիճակը շտկում է «Տորպեդո-Մոսկվան», որը 3 խաղում 2 հաղթանակ է տոնել: Հերթական խաղում Իվանովի սաները պարտության մատնեցին «Սպարտակ-Ալանիային» (3-1): Նույն հաշվով «Դինամոն» հաղթեց «Ռոստովին»: Մյուս խաղերի արդյունքներն են. «Ուրալ»-«Զենիթ»՝ 1-0, «Շինիկ»-«Տորպեդո»՝ 1-1, «Չեռնոմորեց»-«Ռոստով»՝ 2-2:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1.ԲԿՄԱ	11	9	1	1	21-8	28
2.Դինամո	11	6	2	3	23-11	20
3.Սատուրն	11	5	4	2	15-10	19
4.Ռոստով	11	4	5	2	11-10	17
5.Կոիլյա Ս.	11	4	4	3	16-10	16
6.Ռուբին	11	4	4	3	12-11	16
7.Տորպեդո	11	4	3	4	14-14	15
8.Զենիթ	11	4	3	4	8-15	15
9.Ռոստոր	11	3	4	4	13-13	13
10.Սպարտակ	11	3	4	4	13-15	13
11.Շինիկ	11	2	7	2	13-11	13
12.Սպարտակ-Ալ.	11	4	0	7	9-21	12
13.Լոկոմոտիվ	11	3	3	5	13-16	12
14.Չեռնոմորեց	11	2	6	3	12-14	12
15.Տորպեդո-Մ.	11	2	3	6	10-11	9
16.Ուրալ	11	1	3	7	5-18	6

Զվոնարյովան անակնկալ մատուցեց

Թենիսի «Ռոլան Գարոսի» մրցաշարում խոշոր անակնկալի հեղինակ դարձավ ռուսաստանցի 18-ամյա թենիսիստուհի Վերա Զվոնարյովան, որը 1/8 եզրափակիչում պարտության մատնեց ամերիկուհի Վինուս Ռիլյամսին (2–6, 6–2, 6–4): Նրանից հետ չմնաց նաեւ Նադեժդա Պետրովան՝ հաղթելով Ջենիֆեր Կապրիատուն (6–3, 4–6, 6–3): Քառորդ եզրափակիչում երկու ռուս թենիսիստուհիները կհանդիպեն միմյանց հետ: Պայքարից դուրս մնաց Մագդալենա Մալեեւան՝ պարտվելով Կիմ Կլիյստերսից (6–0, 2–6, 1–6): Նրա ճակատագրին արժանացավ նաեւ Լինդսեյ Դեւենպորտը՝ զիջելով Կոնչիտա Մարտինեսին: Քառորդ եզրափակիչի ուղեգիր են նվաճել նաեւ Ռուբինը, Մորեսմոն: Տղամարդկանց մրցաշարում հաջող ելույթներն է շարունակում Անդրե Աղասին, որը հաղթեց բրազիլացի Ֆլավիո Սարեսային (6–2, 6–1, 7–5): Կառլոս Մոյան առավելության հասավ Իրժի Նովակի նկատմամբ: Պայքարը շարունակում են Կորիան, Սաբալենան, Կուերտենը, Մանտիլյան, Ֆեռերոն, Գոնսալեսը, Նիեմինենը: 45-ամյա Մարտինա Նավրատիլովան Սվետլանա Կուզնեցովայի հետ զուգախաղում հաղթեց Ալինա Ժիդկովա-Ակիմո Մորիգամի երկյակին:

«Յանգ բոյզը» զրկվեց մեդալներից

«Յանգ բոյզի» ֆուտբոլիստներին չհաջողվեց նվաճել Շվեյցարիայի առաջնության բրոնզե մեդալները: Ավարտական տուրում թիմը սեփական հարկի տակ զիջեց «Գրասհոպերսին» (2–4): «Յանգ բոյզը» 34 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը՝ մեկ միավորով հետ մնալով բրոնզե մրցանակակիր «Քսամաքսից»: Իսկ երկրի չեմպիոնի կոչումը 27-րդ անգամ նվաճեց «Գրասհոպերսը», որը կներկայացնի երկիրը չեմպիոնների լիգայի մրցաշարում: «Բազելը», «Քսամաքսը» եւ «Յանգ բոյզը» հանդես կգան ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում: Չնայած երկրի անցյալ տարվա չեմպիոն «Բազելը» 3–0 հաշվով հաղթել էր «Քսամաքսին», սակայն մեկ միավորով զիջեց «Գրասհոպերսին»:

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Քաղաքական ընդդիմությունը հայտարարել էր, թե ընտրությունների արդյունքների ոլորտական հրապարակումից հետո հայտարարությամբ հանդես կգա ինքնաբացարկ հայտնելու-չհայտնելու մասին: Պաշտոնական հրապարակումը կայացավ: Կարելի է սպասել, որ մոտ օրերս «Արդարություն» դաշինքը պետք է հստակ դիրքորոշում հայտնի: Սակայն անկախ դրանից, արդեն իսկ փաստ է, որ այս խորհրդարանը քաղաքական անկայունությամբ շատ ավելի վնասակար է լինելու, քան նախորդն էր: Բանն այն է, որ ընդդիմությունը ընտրությունների հայտարարված արդյունքների բոյկոտմանը, երկրորդը՝ ընդհակառակը՝ կտրականապես դեմ է: Սա ըստ էության այս երկու կուսակցությունների առաջին լուրջ տարաձայնությունն է: «Հանրապետությունը» շատ լավ գիտակցում է, որ ստացած քվեներով եւ 15-20 պատգամավորներով անհնար է կենսագործել խորհրդարան գալու հիմնական նպատակը՝ նախագահի պաշտոնանկությունը, այսինքն իշխանափոխությունը, ուստի փորձում է ընտրությունների արդյունքները բոյկոտելով գոնե իշխանություններին ստիպի հաշվի նստել ինչին հազիվ թե ականատես լինենք: Շատ հնարավոր է, որ «Հանրապետության» բարձրացրած այս աղաղակը հետին նպատակներ է հետապնդում. նախքան խորհրդարան մտնելը ստիպել դաշինքի մյուս ուժերին, այդ թվում եւ ՀԺԿ-ին, ընդունել իր առաջատարությունը եւ ակտիվ դերակատարումը որոշումներ կայացնելիս: Մյուս կողմից հազիվ թե «Հանրապետությունը» հրաժարվի իր բազմատարր համախոհներից եւ քաղաքական կշռից՝ գիտակցելով, որ ցանկացած դեպքում պարտություն կրողը ինքն է լինելու:

Այս ամենում սակայն առավել

Երբ մկան խաղն է դառնում կատվի մահը

«Արդարությունը» համակերպվո՞ւմ է

միատարր քաղաքական խմբավորում չէ՝ մեկ գաղափարախոսության շուրջ համախմբված, կազմված է եւ հեղինակությամբ, եւ քաղաքականապես հասունությամբ տարբեր աստիճանների վրա գտնվող մի քանի ուժերից, որոնք օրենսդրական գործունեության հետ կապված ներքին խնդիրներ անպայման ունենալու են: Այդ խնդիրը առավել իրական է դառնում, երբ հաշվի ենք առնում նաեւ այն հանգամանքը, որ «Արդարության» շարքերում ընդգրկված ուժերից մի քանիսի հիմնական նպատակը խորհրդարանական ամբիոնը չկորցնելն էր, մինչդեռ մյուսները նման խնդիր կարծես թե չեն տեսնում: Այսինքն եթե «Հանրապետություն» կուսակցության համար որեւէ նշանակություն չունի խորհրդարանում լինել-չլինելու խնդիրը, ապա առավել մանրներին, *ինչպես օրինակ ԱԺՄ-ին, ԱԺԿ-ին* եւ մյուսներին, նման քննարկումն անգամ ծեռնտու չէ:

Իրականում հենց այդ հանգամանքն էլ թերեւս «Արդարությանը» կդնի ծայրահեղ ծանր իրավիճակի առջեւ: Փաստորեն «Արդարությունը» կկանգնի լինել չլինելու հարցի առաջ, որովհետեւ խնդիրները ոչ թե դաշինքի հեգեմոնների եւ մանրների միջեւ են, այլ երկու խոշոր միավորումների՝ «Հանրապետության» եւ ՀԺԿ-ի: Առաջինը միանշանակ կողմ է խորհրդարանական ընտրությունների հայտարարված բոյկոտմանը, երկրորդը՝ ընդհակառակը՝ կտրականապես դեմ է: Սա ըստ էության այս երկու կուսակցությունների առաջին լուրջ տարաձայնությունն է: «Հանրապետությունը» շատ լավ գիտակցում է, որ ստացած քվեներով եւ 15-20 պատգամավորներով անհնար է կենսագործել խորհրդարան գալու հիմնական նպատակը՝ նախագահի պաշտոնանկությունը, այսինքն իշխանափոխությունը, ուստի փորձում է ընտրությունների արդյունքները բոյկոտելով գոնե իշխանություններին ստիպի հաշվի նստել իրենց հետ: Իսկ ՀԺԿ-ն նույնպես գիտակցելով ստեղծված իրավիճակի բարդությունը, փաստորեն համակերպվում է գոնե ԱԺ ընդդիմության դերը ստանձնելու անուղղակի առաջարկի հետ եւ նահանջում է արմատականությունից՝ դրանով իսկ ազդարարելով իր պարտությունը:

Այս երկու ուժերի միջեւ առկա հակասության լուծումից է կախված դաշինքի մյուս անդամների ճակատագիրը: Քանի որ «Հանրապետության» առաջարկը նրանց ընդհանրապես ծեռնտու չէ, ուստի նրանք ՀԺԿ-ին կհամոզեն սկզբունքային դիրքորոշում հայտնել եւ համակերպվել խորհրդարանում իրենց վերապահված սիմվոլիկ դերակատարմամբ: Այս դեպքում սակայն կտրուկ կվատանան ՀԺԿ-ի եւ «Հանրապետության» հարաբերությունները, նույնիսկ կարելի է սպասել «Արդարությունից» «Հանրապետության» դուրս գալը: Այս դեպքում էլ Ալբերտ Բազեյանի ղեկավարած կուսակցությունը ստիպված կլինի օտարել իրենից Ստեփան Դեմիրճյանի գործոնը՝ որպես հասարակությանը առաջարկվող Ռ. Քոչարյանի այլընտրանք: Իսկ դա նշանակում է՝ մարտի դուրս գալ առանց հրեանու:

Այս սցենարը իհարկե, իրատեսական է միայն այն պարագայում, երբ ընդդիմության բոլոր թեւերը սկզբունքայնություն հանդես բերեն, հետաքրքրականը լինելու է զարգացումների քաղաքական հետեւանքը: Եթե մի պահ ընդունենք, թե «Արդարությունը» գնում է բոյկոտի ճանապարհով, ապա առաջանում է քաղաքական կազուս: Ազատ են մնում այն 14 տեղերը, որոնք ստացել էր դաշինքը ընտրությունների արդյունքներով: Ինչպես են դրանք լրացվելու: Նշվում է, որ դաշինքի ձայները հավասարապես կբաշխվեն հինգ տոկոսը հաղթահարած մյուս քաղաքական ուժերի վրա: Այս դեպքում փաստորեն կամայականորեն տնօրինվում է մի հոծ զանգված ընտրողների ընտրելու իրավունքը: Մյուս կողմից, եթե անգամ ընդունենք այս տարբերակը տրամաբանական, ապա ինչու այդ ձայների տնօրինումից չպետք է օգտվեն նաեւ հինգ տոկոսը չհաղթահարած կուսակցություններն ու դաշինքները: Այս սցենարը, ըստ ամենայնի, քաղաքական որեւէ տեսության շրջանակներում տեղավորել չի լինում, որովհետեւ ցանկացած պարագայում խախտվում է խորհրդարանական քաղաքական ուժերի հավասարակշռությունը: Իսկ նոր ընտրություններ նշանակելու համար «նոր» քաղաքական մեծամասնությունը հազիվ թե համակերպվի: Դրանից կորցնելու նա ավելի շատ բան ունի, քան ընդդիմությունը:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Տիվանդանոցի վերակենդանացման բաժնում մահացել է Տարգան Ենոքյանը

ԵՐԵՎԱՆ, 2 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 30-ին Երեւանի Էրեբունի բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժնում մահացել է Տարգան Ենոքյանը: Վերջինս մայիսի 25-ին՝ խորհրդարանական ընտրությունների օրը, Արարատի մարզի Շահումյան գյուղում տեղակայված թիվ 24/0652 տեղամասի մոտակայքում սպանել էր նույն գյուղի բնակիչ Վրեժ Ավետիսյանին, վիրավորել գյուղապետ Նվեր Կարապետյանին, ինչպես նաեւ նշված ընտրատեղամասի նախագահ Ռոզա Ստեփանյանին եւ «Արդարություն» դաշինքի վստահված անձ Ռաֆիկ Օհանյանին: Միջադեպի ընթացքում ծանր վիրավորվել էր նաեւ ինքը՝ Տարգան Ենոքյանը, եւ նրա կյանքը չհաջողվեց փրկել:

Ինչպես հունիսի 2-ին հայտնեց Արարատի մարզի դատախազ Սուրիկ Պարսամյանը, քննությունը գործով շարունակվելու է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապանի քաղաքապետարանը 04.07.2003 թ. կազմակերպում է դասական բաց աճուրդ: Վաճառվում է Թումանյան փ. «Սյունիք» կինոթատրոնի հարեւանությամբ գտնվող 130 քմ մակերեսով կիսակառույց շենքը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչեւ 27.06.2003 թ. պետք է ներկայացնեն աճուրդի մասնակցության հայտ, ընկերության (անձը հաստատող) փաստաթղթեր, աճուրդի մասնակցության եւ տոմսի անդորրագրեր:

Տեղեկությունների համար դիմել քաղաքապետարան, հեռ. 658-52:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

★★★

Կապանի քաղաքապետարանը 04.07.2003 թ. կազմակերպում է դասական աճուրդ: Վաճառվում է Շահումյան փ. թիվ 11 շենքից՝ 12,0 քմ, թիվ 17 շենքից՝ 12,0 քմ, թիվ 20 շենքից՝ 28,0 քմ, Թումանյան փ. թիվ 1 շենքից՝ 15,6 քմ, թիվ 3 շենքից՝ 93,1 քմ, Բաղաբերդ թաղ. թիվ 1 շենքից՝ 34,7 քմ, 26,0 քմ, թիվ 9 շենքից՝ 151,0 քմ, Դավիթ Բեկ թաղ. թիվ 7 շենքից՝ 40,9 քմ, 30,0 քմ, Մ. Ստեփանյան փ. թիվ 16 շենքից՝ 34,0 քմ, Շինարարների փ. թիվ 2 շենքից՝ 18,0 քմ տարածքներ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչեւ 27.06.2003 թ. պետք է ներկայացնեն աճուրդի մասնակցության հայտ, ընկերության (անձը հաստատող) փաստաթղթեր, աճուրդի մասնակցության եւ տոմսի անդորրագրեր:

Տեղեկությունների համար դիմել քաղաքապետարան, հեռ.՝ 658-52:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

★★★

Կապանի քաղաքապետարանը 04.07.2003 թ. կազմակերպում է մրցույթ Կապանի Մշակույթի պալատի հողատարածքից 210 քմ հողամաս վարձակալությամբ տրամադրելու համար: Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ 27.06.2003 թ. պետք է ներկայացնեն մրցույթի մասնակցության հայտ, ընկերության (անձը հաստատող) փաստաթղթեր, մասնակցության համար վճարի անդորրագիր:

Տեղեկությունների համար դիմել քաղաքապետարան, մրցութային հանձնաժողովին, հեռ.՝ 658-52:

Պատրաստվում եք ճամփորդությա՞ն
Չմոռանաք վերցնել...

Անձնագիր



Ճամպրուկ

HSBC Բանկի Կրեդիտ քարտ

HSBC

Ձեր բանկն ամբողջ աշխարհում

ԷՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ Բանկ Հայաստան ՓԲԸ, 2003

529353 Անվճար
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Շտապ վաճառվում են օգտագործված առմիկական մահճակալ, հարակալավական տոֆա, մեկտրանքի եւ երկտրանքի զգեստապահարաններ: Հեռ. 26-01-80, 22-89-01:
- Տրվում է վարձով 1,5 սենյ. բնակարան փոքր կենտրոնում 10/5: Հեռ. 62-58-35:
- Կորել է Դավթյան Յաննի Սանվելի «Սյուդ» իրավաբանական ինստիտուտի դիպլոմը:
- Գնեմ հին քարտ: Հեռ. (091) 423833:
- Երեւանի հ. 23 ավագ դպրոցը (նախկին պրոֆտեխուսումնարանը) կատարում է ընդունելություն՝ ավտոմոտորդի, կահույքագործի, բժշկական, կենցաղային-էլեկտրական եւ էլեկտրոնային սարքավորումների տպատարկողի եւ վերանորոգողի մասնագիտությունների գծով: Շրջանավարտները ստանում են միջնակարգ կրթություն, համապատասխան որակավորում: Ցանկացողները նաեւ «P.C» կարգի ավտովարորդի վկայական են ստանում: Հասցեն՝ Էրեբունի զանգված, Ավանեսովի 1: Հեռախոս՝ 47-17-31:
- Վաճառվում է ամառանոց Արայի լեռան լանջին, Երեւանից 50 կմ հեռավորությամբ: Ամառանոցը երկհարկանի շինություն է, ավտոնկով, 1000 քմ հողատարածքով, ունի 120 հաս ծառ: Գինը՝ 5000 դոլար: Հեռ.՝ 25-00-96, Հունան:
- Վաճառվում է 3 սենյականոց բնակարան շամոյան գինիների գործարանի մոտ, 16-րդ հարկի 4-րդ հարկում, արեւկող., ընդ. մակերեսը՝ 80 քմ, բնակելին՝ 44 քմ, ունի երկու տնտեսական պատգամ: Գինը՝ 11.500 ԱՄՆ դոլար: Հեռ.՝ 45 22 79:
- Վաճառվում է բջջային հեռախոս «Ալկատել-525», փոխվող պանելով, գինը՝ 190 դոլար: Հեռ.՝ 45 22 79:
- Շտապ վաճառվում է ռուսական հյուրասենյակի կահույք պատ՝ իր փափուկ կահույքով: Հեռ.՝ 65-68-37:

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
In English, Russian, Armenian and Turkish

«Կերամիկա» ՍՊ ընկերությունն աշխատանքի է հրավիրում բարձրագույն կրթությամբ, 30-50 տարեկան ջերմոտեխնիկ-նախագծողների: Աշխատանքային փորձը պարտադիր է: Հեռ. 61-04-51:

ARMENTEL

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելը» հայտարարում է մրցույթ տարբեր տեսակի տնտեսական ապրանքների մատակարարման համար:

Մրցույթի անցկացման պայմանները, ինչպես նաեւ պահանջվող ապրանքների տեխնիկական նկարագրերը շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով:

«Արմենտել» ՀՁ, Սիարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ.՝ 28.70.66:

Առաջարկները պետք է ներկայացվեն վերոհիշյալ հասցեով մինչեւ 2003 թ.-ի հունիսի 12-ի ժամը 12:00-ն:

ՀԱՍՏԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 2. 6. 2003 Գինը՝ 100 դրամ